

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ուշացած Եւ Անբաւարար Բացատրութիւն Սը

Վերջին ամիսներուն Լոս Անճեյրսահայ գաղութը ունեցաւ ազգային գետնի վրայ կորուստներ: Դադրեցան լոյս տեսնելէ նախ «Նոր Կեանք» եւ ապա «Նոր Հայաստան» բերքերը:

Ամիսներ առաջ եւ միայն կողմնակի միջոցներով տեղեկացանք, որ իր դռները փակած է նաեւ Հովիվուտի «Արշակ Տիգրանեան» վարժարանը, որ աւելի քան երեսուն տարիներ յաջողած էր հայեցի եւ բարձրորակ կրթութիւն շարժել հայ երիտասարդութեան:

Թէ՛քէ՛եան Մշակութային Միութեան հովանաւորութիւնը վայելող այս վարժարանի նակատագրի շուրջ խորհրդաւոր լուրջ քննարկներ տեղի ունեցան: Երբ իրենք անցնող Յունիստէն սկսեցին: Մատեր հարց կու տային մեզի, թէ ի՞նչ համար հայ մամուլը չանդրադառնար այս իրադարձութեան, երբ այնքան մեծ աղմուկ բարձրացած էր տարիներ առաջ, Կիպրոսի «Մեյֆունեան» հաստատութեան փակման առթիւ: Պաշտօնական յայտարարութեան բացակայութեան պատճառով, պատշաճ չէին գտած անդրադառնալ այս իրողութեան, անընդունաբար մէջ չիյնալու համար:

Լոռութեան պատը քանդեց Արեւմտեան Ամերիկայի Թեմի մի քանի շաբաթ առաջ հրապարակած պաշտօնական յայտարարութիւնը, որ եկաւ բաւականին լոյս սփռելու դպրոցի փակման առնչուող կարգ մը մանրամասնութիւններուն վրայ եւ յատկապէս իրենց կողմէ կատարուած առաջարկներուն՝ դպրոցի գոյութիւնը պահպանելու ուղղուած:

Առաջնորդարանի այս յայտարարութեան ետք, որ միայն, այս շաբաթ Թէ՛քէ՛եան Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութիւնը հանդէս եկաւ անգլերէն լեզուով հաղորդագրութեամբ մը, որոշ բացատրութիւններ տալով վարժարանի փակման հանգամանակներուն շուրջ: Հիմնականի մէջ շեշտը դրուած է դպրոցի գտնուած շրջանին մէջ հայութեան բիւի մուտքումիւն եւ նիւթական միջոցներու բացակայութեան վրայ: Հաղորդագրութիւնը ոչ մօտէն եւ ոչ ալ հեռուէն չանդրադառնար Առաջնորդարանի առաջարկներուն, խոստանալով միայն Միութեան առաջնորդութիւնը շարունակել այլ վայրերու եւ բնագաւառներու մէջ:

Գնահատելով հանդերձ «Թէ՛քէ՛եանի» ազգանուէր գործունէութիւնը, տրուած բացատրութիւնները կը նկատենք ոչ միայն ուշացած, այլ նաեւ անբաւարար: «ՄԱՍԻՍ»

ԵԱՀԿ Գլխաւոր Քարտուղարը «Պայթիւնավտանգ» Կը Որակէ Ղարաբաղեան Հակամարտութիւնը

ԵԱՀԿ գլխաւոր քարտուղար Լամպերթօ Չանիեր Մոսկուայի մէջ յայտարարած է, թէ զարաբաղեան հակամարտութեան ներկայ իրավիճակը սպառնալիք է ամբողջ տարածաշրջանի համար:

«Այս բացարձակապէս պայթիւնավտանգ իրավիճակ է: Մի քանի միջադէպեր տեղի ունեցած են, որոնց բնուէրը վտանգաւոր է, չլի անկաշունտութեամբ՝ տարածաշրջանի ու Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ սահմանին», - ըսած է Լամպերթօ Չանիեր, յայտնելով որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները կը ծրարեն մօտ ապագային հանդիպիլ՝ քննարկելու համար ստեղծուած իրավիճակը:

«Կը կարծեմ, այս այն պահն է, երբ միջազգային հանրութիւնը իսկապէս պէտք է ուժեղացնէ ճնշումը երկու կողմերուն վրայ եւ ուշադրութիւն հրաւիրէ այս իրավիճակի քաղաքական լուծման անհրաժեշտութեան վրայ», - յայտարարած է Լամպերթօ Չանիեր:

Ան նաեւ ըսած է, որ ԵԱՀԿ ունի յատուկ խումբ, որ կը զբաղուի այդ տարածաշրջանի հսկողութեամբ, բաց այդ մնայուն խումբ չէ, այլ յատուկ խումբ է, որ կը հաւաքուի անհրաժեշտութեան պարագային:



ԵԱՀԿ գլխաւոր քարտուղար Լամպերթօ Չանիեր

«Մենք նախապատրաստած ենք շարք մը սկզբունքներ եւ քայլեր, որոնք անհրաժեշտ է իրականացնել, մասնաւորապէս՝ միջադէպերու հետաքննութեան մեխանիզմ ստեղծել», - ըսած է ԵԱՀԿ-ի գլխաւոր քարտուղարը՝ աւելցնելով, - «Մենք պէտք է աշխատինք, որ երկու կողմերը կարողանան իրենց ներդրումը ունենալ այդ հարցի կարգաւորման մէջ: Մենք կը հետեւինք իրադարձութիւններու զարգացման ներուժին, իսկ այն, անկեղծ ըսած, մտահոգիչ է՝»

Շաբ.ը էջ 4

Ցեղասպանութիւնները Հետազօտողները Կոչ Ըրած Են Գերմանիոյ՝ Գնահատելու Հայոց Ցեղասպանութիւնը

Ցեղասպանութիւնները Հետազօտողներու Միջազգային Ընկերակցութիւնը (International Association of Genocide Scholars (IAGS) Գերմանիոյ խորհրդարանին կոչ ըրած են ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը:

Ընկերակցութիւնը նամակ ուղարկած է Գերմանիոյ Պունտեստակի նախագահ Նորպերտ Լամերտին, խորհրդարանի Արտաքին Յարաբերութիւններու կոմիտէին եւ երկու խմբակցութիւններու ղեկավարներուն:

Կազմակերպութեան յայտարարութեան մէջ ըսուած է, որ Գերմանիոյ կառավարութեան կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը կենսական կարեւորութիւն ունի միջազգային տեսանկիւնէն: Բացի այդ, Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ գերմանական փաստաթուղթերը կարեւոր պատմական նշանակութիւն ունին:

Կազմակերպութիւնը գերմանացի օրէնսդիրներուն կոչ կ'ընէ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին գրաւոր եւ պաշտօնապէս ձեւակերպել Պունտեստակի բոլոր խմբակցութիւններու իրաւական դիրքորոշումները, որոնք կը ճանչնան Օսմանեան կայսրութենէն ներս հայերու, ասորիներու, յոյներու հանդէպ իրագործուած ցեղասպանութիւնը:

Սահմանադրական Հանրաքուէն Պիտի Կայանայ Դեկտեմբեր 6-ին

Հայաստանի նոր Սահմանադրութեան նախագիծի շուրջ ժողովրդային հանրաքուէն տեղի պիտի ունենայ Կիրակի, Դեկտեմբեր 6-ին:

Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը հաստատելով հանրաքուէի ժամանակացուցը, յայտարարեց, որ քարոզարշաւը կարելի է սկսիլ այժմէն իսկ: Սակայն հեռատեսիլ եւ ռատիոյի միջոցաւ քարոզչութիւնը պիտի կատարուի աւելի ուշ:

Վենետիկի Յանձնաժողովը, որ դրական գնահատական տուած էր Սահմանադրական բարեփոխումներուն, իր ղեկավար ձիանի Պուքիլիտի բերնով յայտարարեց, որ Հայաստանի մէջ տեղի ունեցած նախորդ ընտրութիւնները չեն համապատասխանած միջազգային չափանիշներուն:

Վենետիկի Յանձնաժողովը, որ դրական գնահատական տուած էր Սահմանադրական բարեփոխումներուն, իր ղեկավար ձիանի Պուքիլիտի բերնով յայտարարեց, որ Հայաստանի մէջ տեղի ունեցած նախորդ ընտրութիւնները չեն համապատասխանած միջազգային չափանիշներուն:

Ամերիկացի Յայտնի Երգիծարան Գոնոն Օպրայըն Նկարահանում Կը կատարէ Հայաստանի մէջ



Գոնոն Օպրայըն հայկական տարազով՝ Գոնոնի տանաքին առջեւ: Կողմին իր օգնական Սոնա Մովսէսեան

Ամերիկեան TBS հեռատեսիլի ալիքի ուշ երեկոյան սիւուող ամէնօրեայ յայտագիրի յայտնի երգիծարան Գոնոն Օպրայըն այս օրերուն կը գտնուի Հայաստան: Այս մասին կը տեղեկացնէ Հայկական Համագումարը, որու ներկայացուցիչները պատահաբար հանդիպած են Օպրայընին, Երեւանի «Մարիոթ» հիւրանոցէն ներս:

Օպրայըն տեղեկացուցած է որ, Հայաստան եկած է իր օգնական Սոնա Մովսէսեանի հետ, յատուկ հաղորդում պատրաստելու նպատակով:

«Իւրաքանչիւր վարպետի պարտականութիւնն է իր օգնականը այցելութեան տանիլ նախահարկերու երկիրը», կատակելով ըսած է երգիծարանը, Համագումարի ամերիկահայ անդամներուն:

Հայաստանի մասին հաղորդումը պիտի ցուցադրուի Երեքշաբթի, Նոյեմբեր 10-ի երեկոյան ժամը 11-ին TBS-ի գէյպըլի ալիքով:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Միջազգային Սկանդալ Հայաստանում

ՄՈՒՍԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Աժ ՀԱԿ խմբակցութեան դեկավարը յայտարարել է, որ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը կաշառել է վենետիկի Յանձնաժողովին, եւ կան փաստեր, որոնք անհրաժեշտութեան դէպքում կը ներկայացուեն: Սա, իհարկէ, չափազանց լուրջ յայտարարութիւն է, որը ունի ոչ միայն ներքաղաքական, այլ ըստ էութեան՝ նաեւ միջազգային կոնտեքստ: Որովհետեւ եթէ պարզուի է, որ կան իսկապէս հաւաստի փաստեր առ այն, որ վենետիկի Յանձնաժողովին Հայաստանում իշխանութիւնները կաշառել են, ապա սա միջազգային սկանդալ է, քանի որ վենետիկի Յանձնաժողովը, ըստ էութեան, միջազգային հեղինակութիւն ունեցող կառույց է եւ միայն Հայաստանի համար չէ, որ ստեղծուած է, ու միայն Հայաստանի հետ չէ, որ աշխատում է:

Մնում է սպասել, թէ երբ են յայտարարութեան հեղինակները ներկայացնելու այդ փաստերը, որովհետեւ եթէ դրանք չեն ներկայացուած, կամ ներկայացուած են փաստեր, որոնք ընդամենը մեկնաբանութիւնների մակարդակի են, ապա այստեղ արդէն իրավիճակը փոխուած է: Եւ փոխուած է ոչ այն իմաստով, որ հնչել է գրպարտութիւն եւ պէտք է տրուի պատասխան: Սա յայտարարութիւնն անողների, Հայաստանի իշխանութիւնների եւ վենետիկի Յանձնաժողովի խնդիրն է: Հայաստանի հասարակութեանը այստեղ հետաքրքրող կարող է լինել այն, որ առանց համոզիչ փաստերի նմանօրինակ յայտարարութիւնները հանդիսանում են Հայաստանում քաղաքական ընդդիմութեան կամ քաղաքական ընդդիմութեան դիրքերից հանդէս եկողների անգորութեան

Վկայութիւն:

Ըստ էութեան ստացուած է, որ ընդդիմութեան մեղադրանքները արդէն հասնում են միջազգային մասշտաբների, ինչը, սակայն, չունենալով հաւաստի ապացույցներ, կը նշանակի, որ ընդդիմութիւնն այլեւս ներքին մեղադրանքներով չի կարողանում քողարկել իր քաղաքական անարդիւնաւէտութիւնը, անցնում է ընդամենը աւելի լայն մասշտաբների:

Խնդիրն այն է, որ Հայաստանի հասարակութեան համար Հայաստանի իշխանութիւնների անելիքի առումով անհնար բան այլեւս չկայ, այսինքն՝ Հայաստանի քաղաքացիները համոզուած են անկասկած, որ չկայ մի վատ բան, որ այս իշխանութիւններից հնարաւոր չէ սպասել, որ չկայ մի բան, ինչի առաջ իշխանութիւնները կանգ կ'առնեն յանուն սեփական շահերի, չկայ մի բան, որից անգամ կ'ամաչեն: Հայաստանի հասարակութիւնն այս առումով կասկածներ չունի վաղուց:

Եւ ուրեմն կաշառել են վենետիկին, թէ ոչ՝ կարող է հետաքրքիր լինել միմիայն իրաւական պրոցեսի տեսքով, երբ ներկայացուեն փաստեր: Իսկ քաղաքական առումով հասարակութեանը հետաքրքրում են այլ փաստեր՝ ընդդիմադիր որեւէ ուժի որեւէ մի կենսունակութեան փաստ, եթէ կայ: Առայժմ, դժբախտաբար, բոլոր փաստերը խօսում են միայն անկենսունակութեան մասին՝ դժբախտաբար, ինչն էլ, ըստ էութեան, իշխանութիւնների տալիս է բոլոր չափերն անցնելու աւելի ու աւելի մեծ հնարաւորութիւններ: Դէ, իսկ Հայաստանի իշխանութիւնները, ինչպէս արդէն վերը նշուեց, այս հարցում, իհարկէ, չունեն ոչ մի սահմանափակում՝ ոչ ախորժակի, ոչ էթիկայի:

«ԺԱՄԱՆԱԿ»

Պաքոււմ Իրարանցում Է Սկսուել Հայաստանի Սպառնալիքից Յետոյ

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Սեպտեմբերին Ղարաբաղում եւ հայ-ատրպէյճանական սահմանին իրավիճակի էսկալացիայից յետոյ Հայաստանի իշխանութիւնները մի քանի յայտարարութիւններ են արել, որոնք Պաքոււմ աժիոտաժ են առաջացրել: Սկզբում Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է, եւ Հայաստանը պաշտպանելու է Ղարաբաղի անվտանգութիւնը: Այնուհետեւ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանը խորհրդարանում յայտարարեց, որ եթէ Ատրպէյճանը շարունակի ռազմական սադրանքները, Հայաստանը համապատասխան քայլեր կը ձեռնարկի, ընդհուպ մինչեւ ԼՂՀ ճանաչումը:

Ատրպէյճանի ԱԳՆ-ն եւ նախագահի շախտակազմը նեարդային են արձագանքել այս յայտարարութիւններին՝ չնայած ճանաչման դէմ ոչ մի փաստարկ չեն ներկայացրել: Բացի այդ, ատրպէյճանական լրատուամիջոցները սկսել են դիմել ձեռքի տակ ընկած ամէն մէկին՝ խնդրելով մեկնաբանել Հայաստանի յայտարարութիւնները:

Հրապարակ բերուեցին իր հեղինակութիւնն արդէն սպառած Մեթիու Բրայզան եւ որոշ ռուս փորձագէտներ: Հերթը հասաւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Զէյնա Ուորլիքին: Ատրպէյճանական «Թրենդ» գործակալութիւնը հարցազրոյց է հրապարակել, որում Ուորլիքն իբր յայտարարում է, որ եթէ Հայաստանը ճանաչի Ղարաբաղը, Ատր-

խումների նախագծով յստակ պահանջ կայ՝ համապետական ընտրութիւններին մասնակցելու համար պէտք է ՀՀ քաղաքացի լինել եւ վերջին 10 տարում առնուազն 5 տարի առաւելապէս բնակուել Հայաստանում:

Այս յիշեցումը Սերժ Սարգսեանի յստակ մեսիջն է, որ Արա Աբրահամեանը Հայաստանի քաղաքացի չէ, եւ եթէ անգամ ունի երկքաղաքացիութիւն, միեւնոյնն է, դա նրան Հայաստանի քաղաքական դաշտ մտնելու իրաւունք չի տալիս:

Սերժ Սարգսեանը, հաւանաբար, մտավախութիւն ունի, թէ այս անգամ Արա Աբրահամեանը կրեմլի հետ բանակցութիւնների արդիւքնում է կուսակցութիւն հիմնելու որոշում կայացրել: Իսկ դա արդէն փոխում է իրավիճակը: Եթէ կայ նման նախագիծ եւ կրեմլը դրան «դաբը» է տուել, գուցէ Սերժ Սարգսեանից ինչ-ինչ դժգոհութիւններ ունի: Իրականում Սերժ Սարգսեանի անհանգստութիւնը ոչ այնքան Արա Աբրահամեանի կուսակցութիւն հիմնելու մտադրութեանը, որքան կրեմլի դժգոհութեանն է վերաբերում:

Թւում է՝ Հայաստանի ներքաղաքական դաշտում պրոռուսական ուժերի շատ մեծ մրցակցութիւն կայ, ընդ որում ինչպէս իշխանական, այնպէս էլ ընդդիմադիր ճակատում: Ի՞նչ պէտք է անի նոր կուսակցութիւնը, որ գոյութիւն ունեցողները չեն կարողացել, չեն կամեցել անել: Սա հարց է, որն այս պահին չափազանց մտահոգում է Սերժ Սարգսեանին՝ եւ ոչ միայն նրան: «ՀԱՅԵԼԻ»

պէյճանը ռազմական գործողութիւններ կը սկսի:

Այս նախադասութիւնը բերուած է որպէս անուղղակի խօսք, ինչը կասկածներ է յարուցում դրա հաւաստիութեան վերաբերեալ: Հաւասարակշռուած Ուորլիքը հազիւ թէ Ատրպէյճանի անունից պատերազմով սպառնար Հայաստանին:

Փաստացի, Հայաստանի կողմից Ղարաբաղի ճանաչումը Պաքոււմ իրական ու վտանգաւոր են համարում: Դա կը նշանակի, որ բանակցութիւններն աւարտուած են, որի ընթացքում Պաքոււմ այս կամ այն դաշնակիցների օգնութեամբ փորձում է գիշումներ կորզել Հայաստանից: Դա նշանակում է նաեւ ստեղծուած ստատուս-քոլոյի ճանաչում, որը Պաքոււմ իր համար անթոյլատրելի է համարում:

Նալբանդեանն ասում է, որ ճանաչումը կը լինի այն դէպքում, եթէ Ատրպէյճանի ռազմական արկածախնդրութիւնները շարունակուեն: Այդ արկածախնդրութիւնները շարունակուած են:

Հայաստանը կը գնա՞յ նման քայլի, եթէ Ատրպէյճանը զսպի իր լաւակնութիւնները եւ դադարեցնի սադրանքները: Ներկայիս ստատուս-քոլոն այնքան փիրուն է, որ այն պէտք է ամրապնդել եւ առանց ռազմական առիթի: Դրա համար անհրաժեշտ է Հայաստանի քաղաքական կամքը եւ առաջին հերթին ազգային շահերով առաջնորդուելու ունակութիւնը: Այդ շահերն ինչ-որ պահի կը թելադրեն ԼՂՀ անկախութեան ճանաչման ակտը:

«ԼՐԱԳԻՐ»

Երեւան-Մոսկուա՝ Փոխադարձ Մեսիջներ

ԴԱԻԻԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ռուսաստանի Հայերի Միութեան նախագահ Արա Աբրահամեանի օրերս արած յայտարարութիւնը, թէ ինքը մտադիր է Հայաստանում կուսակցութիւն հիմնել եւ մասնակցել առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին, կարծես թէ, անհանգստացրել է Սերժ Սարգսեանին ու նրա թիմին: Արա Աբրահամեանի՝ կուսակցութիւն հիմնելու եւ 2017-ի ընտրութիւններին մասնակցելու մասին յայտարարութիւնից անմիջապէս յետոյ հրապարակուեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի շնորհաւորանքը Ռուսաստանի Հայերի Միութեան ստեղծման 15-ամեակի կապակցութեամբ: Պուտինը յատուկ շեշտել էր Արա Աբրահամեանի կազմակերպութեան ունեցած ներդրումը Ռուսաստանի եւ Հայաստանի աւանդական բարեկամական կապերի ամրապնդման հարցում. «Անցած տարիներին ՌԴՄ-ը վերածել է հեղինակաւոր հասարակական կազմակերպութեան, որը ներկայացնում է հաշիւարհի ամենամեծածախիւ հայ համայնքը՝ մօտաւորապէս 3 մլն մարդ: Դուք ծանրակշիռ աւանդ էք ներդրում մեր երկրում ազգամիջեան յարաբերութիւնների ներդաշնակեցման գործում», - աս-

ուած է ՌԴ նախագահի շնորհաւորական հեռագրում, որը գետեղուած է կրեմլի կայքում:

Պուտինի այս յայտարարութիւնը մեկնաբանուեց, իբրեւ կանաչ լոյս՝ Արա Աբրահամեանի հայաստանեան քաղաքական նորամուտին: Սրանից անմիջապէս յետոյ հրապարակուեց Ռուսաստանի Հայերի Միութեան ստեղծման 15-ամեակի կապակցութեամբ Սերժ Սարգսեանի շնորհաւորական ուղերձը, որը բացի այս կարգի տեքստերին բնորոշ շաբլոն ձեւակերպումներից բաւական երկիմաստ ակնարկ էր պարունակում. «ՌԴՄ-ի կայացման գործում որոշիչ դեր խաղաց կազմակերպութեան հիմնադրի եւ անփոփոխ ղեկավարի՝ Արա Աբրահամեանի նպատակաւորութեամբ աշխատանքը, ով երկար տարիներ մշտապէս բնակուելով Ռուսաստանում, շատ բան է անում մեր եղբայրական պետութիւնների միջեւ բազմակողմ կապերի հետագայ ամրապնդման համար», - ասուած էր Սարգսեանի ուղերձում:

«Երկար տարիներ մշտապէս Ռուսաստանում բնակուելու» հանգամանքի առանձնակի կարեւորումն այս դէպքում, հազիւ թէ, զուտ պատահականութիւն լինի: Ինչպէս գործող սահմանադրութեամբ, այնպէս էլ Դեկտեմբերի 6-ին քուէարկութեան դրուելիք բարեփո-

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՍԲԱԳԻՐ՝
SOPH. UNCUY GAZALETESI
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստանում Ձեւաւորուել է Ընդդիմադիր «Նոր Հայաստան» ճակատ



Ժիրայր Սեֆիրյան ելոյթ կ'ունենայ Նոր ստեղծուած ընդդիմադիր նախաձեռնողներին հանրային փրկութեան ճակատի մասնակցութեամբ ասուլիսի ընթացքին

Հայաստանում ձեւաւորուել է ընդդիմութեան Միասնական՝ «Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատ:

Հոկտեմբերի 12-ին, լրագրողներին հետ հանդիպմանը ճակատին միացած «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը յայտնեց, որ ճակատն ունի քաղաքական խորհուրդ եւ ընդդիմութեան միասնական շտաբ:

«Խորհրդի կազմն է՝ Բաֆֆի Յովհաննիսեան, Ժիրայր Սեֆիրյան, Հմայեակ Յովհաննիսեան, Անդրիաս Ղուկասեան, Պետրոս Մակեան, Գարեգին Չուքասովիչ, Արմէն Մարտիրոսեան: Մենք պայքարում ենք ոչ միայն Սահմանադրական փոփոխութիւնների դէմ, մենք ունենք խորը խնդիրներ, որոնք պէտք է անպայման լուծել», - ասաց Արմէն Մարտիրոսեանը:

Նա յայտնեց, որ ճակատը նախատեսում է մոբիլիզացիոն ժողովրդին, քաղաքացիական անհանգանդութեան գործողութիւններով հեռացնել Սերժ Սարգսեանին եւ նրա վարչախմբին, կասեցնել նոր

Սահմանադրութեան ընդունման գործընթացը եւ ձեւաւորել ժողովրդի վստահութեան անցումային կառավարութիւն. «Մեր սահմանած նպատակների իրագործման ակտիւ գործողութիւնների փուլը կը մեկնարկի Երեւանում անցկացուելիք համապետական հանրաքուէով»:

Թէ ինչ գործունէութիւն է ծաւալելու ընդդիմութեան միասնական շտաբը, «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ժիրայր Սեֆիրյանը չցանկացաւ յայտնել:

«Մի բան յստակ է, որ մենք շատ ուրախ կը լինենք, որ մեր շարքերը համալրուեն, մեզ միանան Ստեփան Դեմիրճեանը, Հայ Ազգային Գոնկրէսից ներկայացուցիչ կամ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Նիկոլ Փաշինեանը», - ակելացրեց Սեֆիրյանը՝ նշելով, որ այլ խմբերի էլ են դիմելու, որ իրենց միանան:

Նշենք, որ «Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատին այս պահին միացել են «Ժառանգութիւնը», «Հիմնադիր խորհրդարանը», «Ութի Հայաստանը»:

Գիւմրիում Ոստիկանները Ընտրողներին «Ներկայ-Բացակայ» ԵՆ Անում

Սահմանադրութեան փոփոխութիւնների հանրաքուէին ընդառաջ ոստիկանները Գիւմրիում սկսել են դադից թաղ, տնից տուն շրջել ու ընտրողների հաշուառուներին կանխազգուշացնել: Թէեւ ոստիկանութեան պաշտօնական հաղորդագրութիւնում նշուած է, որ Հայաստանի ոստիկանապետը Հոկտեմբերի 10-ին է խորհրդակցութիւն անցկացրել ու յանձնարարել հաշուառուներին իրականացնել, գիւմրեցիներին շատերի պնդմամբ իրաւապահները դրանից ակելի վաղ են իրենց այցելել:

«Երեք օր առաջ դուռը թակեցին, ներս մտաւ ոստիկանութեան աշխատող, ներկայացաւ որպէս թաղի տեսուչ, ասաց, որ սահմանադրական է դադարեցնում կոչուածի նպատակով է, նստեց ու սկսեց հարցնել՝ ով կայ, ով չկայ մեզանից», - «Ազատութեան» հետ զրոյցում պատմում էին նրանք:

Ընտրացուցակներում անձը դու թիւնների վերաբերեալ պնդումները նոր չեն, սակայն, գիւմրեցիների խօսքերով, ոստիկաններն առաջին անգամ են ընտրողներին ներկայ-բացակայ անում:

Գիւմրիի երկու իրարից բաւական հեռու թաղամասերում բնակող մարդիկ պնդում էին, որ ոստիկանները անձնական տուեալները ճշդելուց բացի նաեւ հեռախօսահամար են պահանջել:

Փորձեցինք ճշդել, թէ ինչո՞ւ են իրաւապահները մինչ ոստիկանապետի յանձնարարականն ու հանրաքուէի նշանակումը արդէն սկսել ընտրողների հաշուառումը: Ոստիկանութեան լրատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի պատասխանատու Աշոտ Ահարոնեանն ասաց, որ դա թաղային ոստիկանների ամենօրեայ աշխատանքն է:

«Բնական է, եթէ իրենք «այո»-ին կողմնակից են ու վերջին պահին հասնի, ընտրողները տեսնեն՝ քիչ են կամ գերակշիռ մասը «ոչ» է ասել, բացակայ մարդկանցով, կամ մահացածներով, կամ չգիտեմ ինչ միջոցներով կարողանան «այո»-ն ակելի շատ անել, որովհետեւ բոլորը գիտենք, որ Հայաստանում ընտրութիւնները ինչպէս են անցկացուած», - մեզ հետ զրոյցում ասում էր մի գիւմրեցի երիտասարդ:

Իրաւապահ Մարմինները Կը Զբաղուեն Լեւոն Զուրաբեանի Յայտարարութեամբ

Վենետիկի Յանձնաժողովին կաշառելու մասին ԶԼՄ-ներում հրատարակուած Ազգային ժողովի Հայ Ազգային Գոնկրէս խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի յայտարարութեանը, ինչպէս «Ազատութեանը» փոխանցեցին Գլխաւոր դատախազութիւնից, ուղարկուել է Ոստիկանութեան կազմակերպուած յանցաւորութեան դէմ պայքարի գլխաւոր վարչութիւն՝ «ստուգողական գործողութիւններ իրականացնելու նպատակով»:

Իրաւապահների ուշադրութիւնն արժանացել է անցած ուրբաթ խորհրդարանական ճեպագրոյցների ընթացքում պատգամաւորի հետեւեալ յայտարարութիւնը. - «Սահմանադրական փոփոխութիւնների կողմնակիցները շատ նեղ շրջանակ են: Դա իշխող կուսակցութիւնն է՝ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ, դա իր կողմից ստեղծուած սահմանադրական յանձնաժողովն է՝ Գագիկ Յարութիւնեանի ղեկավարութեամբ, որի միակ գործը եղել է կաշառել Վենետիկի Յանձնաժողովին, ինքը զբաղուել է այնտեղ լրբերիմով, եւ

մենք փաստեր էլ ունենք, Դաշնակցութիւնը... եւ այն քաղաքական ուժերը, ում ուղղակի մէկին ծեծելով, մէկին կաշառելով, մէկին գայթակղելով բերել են այս ճամբար»:

Զուրաբեանն այդ օրը ակելին չասաց՝ լրագրողի ճշդող հարցին արձագանգելով, թէ փաստերը կը հրատարակեն:

Իրաւապահների այս նախաձեռնութեանը կողմ է Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը. - «Պարզուելու դէպքում պէտք է պատասխանատուութեան համապատասխան քայլեր արուի՝ եթէ իրականութիւն կայ: Պարզապէս ես հումորով եմ վերաբերում դրան: Իսկ չպարզուելու դէպքում, ինձ թուում է, որ համապատասխան միջոցներ պէտք է ձեռք առնուի նման յայտարարութիւն անողի նկատմամբ: Պատասխանատուութեան ինստիտուտը պէտք է գործի, հակառակ դէպքում, եթէ չի գործում այդ ինստիտուտը, դրանք կարող են լինել շարունակական»:

Որոտանի Կասկադի Ամերիկեան Սեփականատէրը Հերքում է Ֆինանսական Խնդիրների Մասին Լուրերը

Հայաստանի էներգոհամակարգի մօտ 10 տոկոս հօգրութիւնն ապահովող Որոտանի կասկադի նոր սեփականատէր, ամերիկեան «Քոնթուր Գլոբալ» ընկերութիւնը հերքում է մամուլում շրջանառուող լուրերը, թէ ընկերութիւնը ֆինանսական խնդիրներ ունի եւ գործարքի գումարը վճարել է հայաստանեան բանկերից վարկեր վերցնելու հաշուին:

«Հայաստանեան բանկերից մենք վերցրել ենք ընդամենը 28 միլիոն դոլար՝ 90-ից, այսինքն մէկ երրորդից ակելի քիչ: Վերցրել ենք ուղղակի, որովհետեւ այդ գումարները հասանելի են, փոխհատուցում տարբերակ է եղել, բանկերին համար ակելի յուսալի բիզնես ներդրում է, մեզ համար էլ տեղական

տնտեսութեանը նպաստող ֆինանսական ռեսուրսներ են, ինչու ոչ», - ասաց «Քոնթուր Գլոբալ» ընկերութեան հայաստանեան գլխաւոր ներկայացուցիչ Արա Յովսէփեանը:

Ռազմավարական նշանակութեան 4 ջրամբար եւ 3 ՀէԿ ներառող Որոտանի կասկադը ամերիկեան ընկերութեանը վաճառուեց 180 մլն դոլարով, գումարի կէսն արդէն փոխանցուել է կառավարութեանը:

Արա Յովսէփեանը չի ընդունում ընդդիմախօսների պնդումները, թէ կասկադը վաճառուել է շուկայականից շատ ցածր գնով. «Ամէն ինչ իր գինն ունի, տուեալ դէպքում այս կայանի գինը այդքան էր, գնորդը այդքան էր պատրաստ տալ»:

Ցմահ Ազատագրուածները Հարունակում ԵՆ Հացադուլը

Հոկտեմբեր 12-ից «Նուբարաշէն» քրէականտարողական հիմնարկում անժամկէտ հացադուլ սկսած 45 ցմահ դատապարտեալները պահանջում են վերանայել իրենց քրէական գործերը՝ հաշուի առնելով նաեւ ի յայտ եկած նոր հանգամանքները:

Թէպէտ ցմահ ազատագրուածների բաց նամակն ուղղուած է ՀՀ նախագահին, Գլխաւոր դատախազին, ՀՀ օմբուդսմենին, ԱԺ համապատասխան յանձնաժողովին ու Արդարադատութեան նախարարութեանը, մինչեւ այս պահը նրանց հետ հանդիպել է միայն Արդարադատութեան փոխնախարարն ու նախարարութեան քրէականտարողական վարչութեան ղեկավար կազմը:

Արդարադատութեան նախարարութիւնից «Ազատութեանը» փոխանցեցին, որ հանդիպման ընթացքում քննարկուել են բարձրացուած խնդիրների լուծման ճանապարհները, ներկայացուել են վիճակի բարելաւմանը միտուած մի շարք օրէնսդրական նախաձեռ-

նութիւններ, նաեւ՝ փոխնախարարը յորդորել է դատապարտեալներին դադարեցնել հացադուլը:

Ցմահ ազատագրուածների քրէական գործերը վերանայելու հարցով մի քանի անգամ դատարան մտած ու մերժուած փաստաբան Ռոբերտ Ռեւազեանը համոզուել է, որ վճարից յետոյ երեւան եկած նոր փաստերը դատարանները երբեք բաւարար հիմք չեն համարում:

Տարիներ շարունակ այս խնդրով զբաղող լրագրող Զարուհի Մեջլումեանը, ձեռքի տակ ունեցած փաստերը հաշուի առնելով, պնդում է՝ շուրջ 100 ցմահ ազատագրուածներից ոմանք տարիներ առաջ դատական հնարաւոր սխալի գոհեր են: Մեջլումեանը վստահ է, եթէ Հայաստանն էլ արեւմտեան երկրների նման չոչնչացնել իրեղէն ապացոյցները (օրինակ դանակը, որով սպանութիւն է տեղի ունեցել), ապա հնարաւոր է Հայաստանում էլ ցմահ դատապարտուածն ազատ արձակուելը»:

ԼՈՒՐԵՐ

«Նոյեմբերի 1-ին Մենք ժողովրդավարական Ձեռով Կը Պատժենք»։ Կարո Փայլանը՝ Անգարայի Պայթիւնների Մասին

Թուրքիայի քրդական «Ժողովուրդների Դեմոկրատական» (HDP) կուսակցութիւնը ժողովրդավարական ձեռով է պատժելու Հոկտեմբերի 10-ին Անգարայում տասնեակ մարդկանց կեանք խլած պայթիւնների մեղաւորներին: NEWS.am-ի թղթակցի հետ գրոյցում նման կարծիք յայտնեց կուսակցութիւնից պատգամաւոր ընտրուած, ազգութեամբ հայ պատգամաւոր Կարո Փայլանը:



Թուրքիայի յարիտարանի անդամ Կարո Փայլան

«Իմ ցանկութիւնն է, որ մինչեւ խորհրդարանական ընտրութիւնները բացառապէս Հոկտեմբերի 10-ին տեղի ունեցածը եւ մեղաւորները պատժուեն: Մենք վրէժ չենք լուծելու, շարունակելու ենք խաղաղութիւն քարոզել, իսկ Նոյեմբերի 1-ին մենք նրանց կը պատժենք ժողովրդավարական ձեւերով: Մենք չենք ցանկանում՝ արիւն թափուի, մենք խաղաղութիւն ենք ուզում», - ասաց հայ պատգամաւորը:

Հպատժուեց. «Իմ նշած եւ ոչ մի դէպքում ուսումնասիրութիւն չկատարուեց, մեղաւորներին չյայտնաբերեցին, չպատժեցին: Իրաւապահ մարմինները բոլոր դէպքերում էլ փակում են իրենց աչքերը՝ առանց հետեւանքների մասին մտածելու»:

Թէ ով է կանգնած Հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած արիւնալի դէպքերի հետեւում, Կարո Փայլանը չցանկացաւ անուններ տալ: Նրա խօսքով՝ ձեռագիրը նոյնն է. 2007թ. Յունուարին սպանուեց Հրանդ Դինքը, ամիսներ առաջ Սուրուչում նմանատիպ պայթիւն տեղի ունեցաւ, մինչդեռ ոչ ոք

Յիշեցնենք, որ Թուրքիայի մայրաքաղաք Անգարայում 2015թ. Հոկտեմբերի 10-ի առաւօտեան արհամիութիւնների կազմակերպած խաղաղութեան հանրահաւաքի ժամանակ տեղի են ունեցել հզօր պայթիւններ, որոնց հետեւանքով զոհուել է առնուազն 97, վիրաւորուել 246 քաղաքացի:

Օրհան Փամուք. «Երդողանը Երկիրը Հասցրել է Անդունդի Եզրին»

Թուրք յայտնի գրող, Նոբելեան մրցանակակիր Օրհան Փամուքը քննադատել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ ասելով, որ վերջինս երկիրը հակամարտութեան եզրին է հասցրել:



Թուրքիայի գրող, Նոբելեան մրցանակակիր Օրհան Փամուք

Իտալական «La Repubblica» թերթին տուած հարցազրոյցում Փամուքն ասել է, որ Թուրքիայում աճող անկայունութիւնը կապուած է ընտրութիւններում էրդողանի կուսակցութեան պարտութեան հետ: «Նա չկարողացաւ քրդերին համոզել, որ քուէարկեն նախագահական հանրապետութիւն ստեղծելու իր նախագծի օգտին», - ասել է գրողը:

Փամուքի խօսքով, Թուրքիայում մարդիկ ասես կաթուածահար եղած լինեն, որովհետեւ խաղաղ երկրից Թուրքիան յանկարծ յայտնուել է ԽՊ-ի եւ քրդերի միջեւ պատերազմի արանքում: «Ես անհանգիստ եմ, որովհետեւ գիտեմ, որ էրդողանն ուզում է մեն-մենակ կառավարել եւ ցանկացած գնով: Նա չի ուզում կիսել իշխանութիւնը», - նշել է Փամուքը:

Փամուքը նշել է, թէ վախենում է, որ իրավիճակը կարող է քաղաքացիական պատերազմի հանգեցնել, տեղեկացնում է AFP-ը:

«Ամբողջ երկիրը հասկացել է նրա հաշտարկը: Նախ նա չցանկացաւ ԽՊ-ի դէմ պայքարող միջազգային կոալիցիայի մաս կազմել, յետոյ համաձայնեց անել այն, ինչ իրեն խնդրեցին ամերիկացիները՝ միաժամանակ սկսելով ուժակոծել քրդերին», - յայտարարել է

ԵԱՀԿ Գլխաւոր Քարտուղարը

Շարունակուած էջ 1-էն

յատկապէս ծանր սպառազինութիւններու կիրառումը», - ընդգծած է ԵԱՀԿ-ի գլխաւոր քարտուղարը:

Լամպերթօ Զանիեր դարաբարան հարցին անդրադարձած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրովի հետ մամուլի միատեղ ասուլիսի ընթացքին: Մինչ Լաւրովի հետ

հանդիպումը, ան Ղարաբաղի հարցը քննարկած է նաեւ ՀԱՊԿ-ի գլխաւոր քարտուղար Նիկոլայ Բորդիւժայի հետ:

Նիկոլայ Բորդիւժայ յայտարարած է, որ ՀԱՊԿ-ն ու ԵԱՀԿ-ն համաձայնած են միասին աշխատել՝ Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման վրայ:

«Մենք պայմանաւորուած ենք համալիր քայլերու շուրջ, որ պէտք է միատեղ կատարենք: Մասնաւոր

Ֆրանկոֆոնիայի Կազմակերպութեան Համաժողովը 5 Բանաձեւ է Ընդունել, Որոնցից Մէկը՝ Ցեղասպանութիւնների Մասին



Ֆրանսախօս երկիրներու՝ Ֆրանկոֆոնի Միջազգային Կազմակերպութեան նախարարական համաժողովը Երեւանի մէջ

Հոկտեմբեր 10-11 Երեւանում տեղի է ունեցել Ֆրանսախօս երկրների՝ Ֆրանկոֆոնիայի Միջազգային Կազմակերպութեան նախարարական համաժողովը, որի ժամանակ 5 բանաձեւ է ընդունուել, որոնցից 3-ը՝ Հայաստանի նախաձեռնութեամբ: Դրանցից մին վերաբերում է ցեղասպանութիւնների կանխարգելմանը:

Նաեւ լաւ հարթակ է երկկողմ հանդիպումների անցկացման համար: Ես ինքս, օգտուելով առիթից, մօտ 25 հանդիպում եմ անցկացրել», - նշել է Նալբանդեանը: Նախարարի խօսքով՝ Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների արտգործնախարարների հետ մի շարք փաստաթղթեր են ստորագրուել: «Հայաստանը եւս մէկ անգամ հաստատեց Ֆրանկոֆոնիայի նպատակներին եւ արժէքներին հաւատարիմ մնալու որոշումը», - նշել է արտգործնախարարը:

Այս մասին Հոկտեմբերի 12-ին՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Միքայէլ Ժանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, ասել է ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը:

Էդուարդ Նալբանդեանը Միքայէլ Ժանին Հայաստանի ԱԳՆ ոսկէ շքանշան է յանձնել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան արտգործնախարարների 31-րդ նստաշրջանը կազմակերպելու գործում ունեցած աւանդի համար:

ԵՄ-ն Հայաստանի Հետ Նոր Համաձայնագրի Մանդատ է Տուել

ԵՄ Խորհուրդը լիազօրեւ է Եւրայանձնաժողովին եւ Բարձր ներկայացուցչին բանակցութիւններ սկսել Հայաստանի հետ նոր, իրաւաբանօրէն պարտադիր եւ համընդգրկուն համաձայնագրի վերաբերեալ բանակցութիւններ սկսելու:



Որոշումը կայացուել է Հոկտեմբերի 12-ին, Լիւքսեմբուրգում, արտգործնախարարների մակարդակով: Այդ մասին NEWS.am-ի հարցման ի պատասխան յայտարարել է ԵՄ արտաքին գործերի եւ համագործակցութեան ղեկարտամենտի մամուլի ծառայութեան աշխատակից Վիրժինի Բատտուշենրիքստը:

ԵՄ-ն հաւատարիմ է Հայաստանի հետ համակողմանի համագործակցութեան հետագայ զարգացմանն ու ամրապնդմանը բոլոր ոլորտներում, որոնք Արեւելեան գործընկերութեան շրջանակներում փոխադարձ հետաքրքրութիւն են ներկայացնում:

Նրա խօսքով, այդ համաձայնագիրը կը փոխարինի ԵՄ եւ Հայաստանի միջեւ ներկայիս Գործընկերութեան եւ համագործակցութեան համաձայնագրին:

Բանակցութիւնների պաշտօնական մեկնարկը նախատեսուած է մինչեւ տարեվերջ:

Նրա խօսքով, այդ համաձայնագիրը կը փոխարինի ԵՄ եւ Հայաստանի միջեւ ներկայիս Գործընկերութեան եւ համագործակցութեան համաձայնագրին:

ԵԱՀԿ-ի ու ՀԱՊԿ-ի գլխաւոր քարտուղարները քննարկած են նաեւ Ուքրանիոյ արեւելքը ստեղծուած իրավիճակը:

Ո՞Ր ՄՆԱՅ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»Ը

ԹՈՒՆՈՒՉ

20րդ դարու արաբական աշխարհի խռովայն ժամանակները պատճառ դարձաւ բռնատիրութեան եւ ոչ ժողովրդավարական իշխանութիւններու հանդէպ բողոքի եւ պայքարի համատարած իրավիճակի սրման:

«Արաբական Գարուն»ի առաջին ազդանշանը ծնունդ առաւ Թունուզի մէջ 2010ի Դեկտեմբերին վերջ տրուեցաւ ինքնիշխան Ջէյն էլ Ապիտինի կառավարութեան: Նախկին կառավարիչը Պէն Ալի, իր կնոջ եւ հետեւորդներուն հետ փախուստ տուաւ դէպի արտասահման: Արդարեւ, նախկին կառավարիչը՝ 2011ի Յունիսին, իր բացակայութեան 35 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, ամբաստանուելով որպէս գող եւ կաշառակեր: Արաբական խաղաղասէր այս երկրէն ներս ներկայիս անգործութիւնը 15 առ հարիւրի սահմաններուն մէջ է, միւս կողմէ իսլամիստ ծայրայեղականներուն համար Թունուզը կը նկատուի որպէս իրենց յաջորդ թիրախներէն մին:



ԼԻԲԱՆԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՒԱՆՆԵՐ ԸՆԿ. ԳԱԼՓԱՔԱՆԻ ԵՒ ՄԵԹՐ ԹՈՒՐՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏՈՐԻ ՇԱՄՈՒՆԻ ԵՒ ՍԱՄԻՐ ԺԱԱԺԱՅԻ ԴԵՏ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պետական երեսփոխաններ Ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ Մեթր. Սերժ Թուրսարգիսեան երէկ տեսակցեցան Ազգային Ազատականներու Կուսակցութեան նախագահ Երեսփոխան Տորի Շամունի հետ: Սոսեք շրջանին մէջ տեղի ունեցած տեսակցութեան ընթացքին քննարկուեցան երկրի ընդհանուր զարգացումները, ազգային երկխօսութեան մթնոլորտը եւ գլխաւոր մարտահրաւէրները, որոնք իրենց ժխտական ազդեցութիւնը կը ձգեն լիբանանցի աւօրեային վրայ: Ժողովականները որոշեցին շարունակել հանդիպումները եւ հետեւել լիբանանեան եւ շրջանային զարգացումներուն:

ԵԳԻՊՏՈՍ

2011 թուականի ձմրան վերջերուն ու գարնան սկիզբը, Գահրէի Թահրիր հրապարակին վրայ սկսաւ երիտասարդ եգիպտացիներու զանգուածային բողոքը: Անոնք կը պահանջէին 30 տարիներէ ի վեր իշխող Հոսնի Միսլաբարաքի իշխանութեան վերջ տրուելը: Շաբաթներու հակա-յական ցոյցերուն եւ բռնարարներուն որպէս հետեւանք ան ստիպողաբար իր հրաժարականը տուաւ:

Առժամեայ զինուորական իշխանութեան օրով տեղի ունեցած 2012ի երեսփոխանական ընտրութիւններուն յաղթական ելան իսլամ եղբայրները, գլխաւորութեամբ Մուհամմատ Մորսիի: Այս նոր իրավիճակին դէմ կանգնեցան Հոսնի Միսլաբարաքի հետեւորդները եւ բողոքի ցոյցերով տեղորոշեցին եւ սպաննութիւններու խառնակ վիճակ մը ստեղծեցին: Երկրի անդորրութիւնը, տնտեսութիւնն ու զբօսաշրջութիւնը մեծապէս տուժելէ ետք, 2013ին իշխանութեան գլուխն անցաւ Ապտէլ Ֆաթիմա Սիսին:

87 ամեայ Մուսլաբարաք զինուորական բանտի հիւանդանոցին մէջ ներկայիս կը սպասէ իր երրորդ դատավարութեան: Այս անգամ ամբաստանուած է կաշառակերութեամբ եւ սպանութիւններով: Մորսին եւս բանտարկուած կը մնայ եւ ամբաստանուած է գլխաւորաբար քսան հազար բանտարկեալներու ազատ արձակումով, որոնցմէ շատեր «Իսլամ Եղբայրներ» կազմակերպութեան անդամ են:

Նշենք նաեւ որ Սիսին 2014 Մայիսին կայացած նախագահական ընտրութիւններուն յաղթական դուրս եկած էր: Սակայն իր կառավարութիւնը յետաձգել տուած է խորհրդարանական ընտրութիւնները:

ԼԻՊԻԱ

Ներշնչուելով շրջապատի իրավիճակէն եւ ազդուելով օտար միջամտութիւններէն լիպիացի ըմբոստ ցեղախումբեր սկսան քաղաքական նպատակներ հետապնդել եւ համախմբուիլ տապալելու համար երկրի տասնեակ տարիներու իշխանապետ Մուամմար Քատաֆին: Եօթ ամիսներ շարունակ ՆԱԹՕ-ի օդուծի յարձակումներուն շնորհիւ մեծապէս քաջալերուած ըմբոստները կրցան ձեռքարկել եւ ապա սպաննել Մուամմար Քատաֆին 2011ի Հոկտեմբերին, վերջ տալով Հիւսիսային Ափրիկէի քարիւղով հարուստ այս երկրի դեկավարի 42 տարուան իշխանութեան: Արիւնալի բախումները ցարդ վերջ չեն գտած 6 միլիոն հպատակ ունեցող Լիպիոյ մէջ:

Պէնկագի եւ Թրիփոլի քաղաքներու իշխանութիւնները չեն կրցած խաղաղ կեանք մը ապահովել ստեղծելով անիշխանական իրավիճակ մը, որմէ կրնան օգտուիլ իսլամիստ ծայրայեղականները:

ՍՈՒՐԻԱ

«Արաբական Գարուն»ի հեղինակները գրեթէ ամենուրէք կրցան ներքին յեղափոխութեամբ տապալել այդ երկրի գերիշխան դեկավարները: Սուրիան բացառութիւն կը կազմէ: Արդարեւ աւելի քան չորս տարիներէ ի վեր շարունակուող քաղաքացիական կռիւններով չի կրցան վար առնել նախագահ Պաշշար Ասատը:

Միացեալ Նահանգներն ու արեւմտեան շատ մը երկիրներ զօրավիզ կանգնեցան հակակառավարական ոյժերուն, իրենց հետ ունենալով նաեւ արաբական երկիրներու սիւննի մարտնչողները, տապալելու համար Ասատի շիիթ իշխանութիւնն ու ալաի փոքրամասնականները:

Իրերու լոյսին տակ ծայրայեղ իսլամիստները յայտարարեցին որ Սուրիոյ մէկ տարածքին վրայ «խալիֆա»ութիւն կ'ուզեն հաստատել եւ իրենց սահմանները տարածել մինչեւ Իրաք: Անոնք սպառնացին նաեւ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պետական երեսփոխաններ Ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ Մեթր Սերժ Թուրսարգիսեան այցելեցին Մասրապ ու տեսակցեցան Լիբանանեան Ուժեր Կուսակցութեան նախագահ Մամիր Ժաաթայի հետ, քննարկելու համար երկրի ընդհանուր զարգացումները, քաղաքական եւ ապահովական իրադարձութիւնները, ներկայի տագնապէն դուրս գալու միջոցները: Զրուցակիցները մանրամասնօրէն արծարծեցին պետական հաստատութիւններու դատարկութեան երեւոյթը եւ աշխատանքներու խոչընդոտումը: Անոնք հաստատեցին նոր նախագահ մը ընտրելու անհրաժեշտութիւնը, վերակենդանացնելու համար հաստատութիւններուն դերը: Զրուցակիցները դիտել տուին, որ այդ պէտք է ըլլայ քաղաքական տագնապի լուծման տրամաբանական առաջին հանգրուանը, որուն կը յաջորդէ նոր կառավարութեան կազմութիւնը եւ ընտրական նոր ու արդիական օրէնքի հիման վրայ խորհրդարանական ընտրութիւններու կայացումը:

Տեսակցութեան ընթացքին նաեւ արծարծուեցաւ կառավարութեան վիճակը, նիստեր գումարելու եւ քաղաքացիներուն աւօրեայ խնդիրները լուծող որոշումներ առնելու դժուարութիւնը: Ընկ. Գալփաքեան եւ Մեթր. Թուրսարգիսեան ապա պատասխանեցին լրատուամիջոցներու ներկայացուցիչներու հարցումներուն:

գրաւելու Հալէպը զայն վերածելու համար իրենց մայրաքաղաքը: Ի տես այս իրավիճակին Սուրիոյ հրաւրէով սկսաւ Ռուսիոյ միջամտութիւնը, զինեալ յարձակումներ կատարելու հակակառավարական ոյժերուն դէմ, նպատակ ունենալով Քրեմլինի երկար տարիներու բարեկամ Ասատի իշխանութեան աջակցութիւն ցուցաբերել:

Կը կարծուի թէ ցարդ սպաննուած են 250,000 սուրիացիներ, իսկ ՄԱԿի պաշտօնեաններուն համաձայն 24 միլիոն բնակչութիւն ունեցող երկրի քաղաքացիներուն կէսը իրենց տուններէն դուրս հանուած են:



Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91206-1948

www.syrianarmenianreliefund.org

ՖՐԱՆՍԱՑԻ ՆԱԽԱՐԱՐ. ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ՉԿԱՐՈՂԱՑԱԲ ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ



Հոկտեմբերի 9-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի լիշատակը լավագույնս Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելությունից-Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ցուցանմուշներին ծանօթանալուց յետոյ, Ֆրանսայի եւրոպական հարցերի պետքարտուղար Հարլեմ Դեգիլը խոստովանել է, որ հոգին տակնուվրայ է եղել, եւ լսած պատմություններից ինքը ցնցուկ է:


Դեգիլը, «Արմենայրէս»-ի հարցին ի պատասխան, շեշտում է, որ Հայաստան այցելելով չէր կարող չզգալ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, յատկապես, երբ այս տարի լրացել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, եւ իր երկրի նախագահը՝ Ֆրանսուա Օլանդը, հենց այդ վայրում է ոգեկոչել նրանց լիշատակը:

«Փաստագրական տեղեկությունների շնորհիւ նախ ծանօթացանք

այդ տարածաշրջանում ապրող մարդկանց կենսակերպին, տեղեկացանք մարտիրոսության ու նախնիների մասին, որ տեղի ունեցավ սկսած 19-րդ դարից: Յետոյ արդէն վերջնակէտում եղաւ երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունը: Ինչ-որ մի տեղ այս ամէնը նաեւ միջազգային հանրության անտարբերության հետեւանք է: Չնայած բազում դիւանադէտներին, մտաւորականների վկայություններին, աշխարհը թող տուէց այդ ցեղասպանությունը: Սա մարդկության պատմության մէջ առաջին ցեղասպանությունն է՝ կազմակերպուած մեթոդաբար ողջ պետության կողմից՝ վարչական ապարատի ու բանակի ներգրաւուածութեամբ: Գաղափարախօսութեամբ:

Շար.ը էջ 19

ՀԱՅԱԶԳԻ ԼՐԱԳՐՈՂԻ ԳԻՐՔԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՍԱՌՈՅՑ Է ԿՈՏՐՈՒՄ



Ա1+- Ստամբուլընակ հայագրի լրագրող Վերջիհան Զիֆլիօղլիի 12 տարուայ աշխատանքը ամփոփուել է մի գրքում: Լոյս է տեսել նրա «Հայրի պատմությունը, որոնք քաւարանում են: Մենք չենք սիրաշահում ոչ Յիսուսին, ոչ Մուհամմէդին» գիրքը: Այն ներկայացնում է լրագրողի՝ Արեւելեան Անատոլիայում արուած հետազոտությունները: Վերջիհանը խոստովանում է՝ հեշտ աշխատանք չի եղել, դժուար է եղել իսլամացուած հայերի վստահութիւնը շահելը:

Բայց այն օրից, ինչ լոյս է տեսել

գիրքը, Վերջիհանը ամէն օր նամակներ է ստանում իսլամացուած հայերից, որոնք ներկայացնում են իրենց գաղտնի պատմությունները: Օգոստոսին գիրքը լոյս է տեսել 1000 տպաքանակով, որն արագ սպառուել է: Առաջիկայում գրախանութներում կը յայտնուի երկրորդ 1000 օրինակը:

Ի դէպ, սա իրեն « 100 տոկոս լրագրող» համարող Վերջիհան Զիֆլիօղլիի առաջին գիրքը չէ: Նա երեք գրքերի հեղինակ է, եւ առաջիկայում լոյս կը տեսնի եւս մէկը:

ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 2700 ՏԱՐԵԿԱՆ Է, ՆՇՈՒԵՑ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՕՆԸ



Էջմիածնի 2700-ամեակի տօնակատարության միջոցառումների շարքը սկսուել էր դեռ 2 օր առաջ: Յոբելեանը լիշարժան դարձնելու նպատակով էջմիածնի Զոյալի անուան փողոցն ամիսներ առաջ կոչուեց զօրավար Անդրանիկի անունով, տեղադրուեց նաեւ զօրավարի բարձրաքանդակը:

Քաղաքում տեղադրուել էր նաեւ անուանի երգահան Ռոմանոս Մելիքեանի բարձրաքանդակը, բացուել էր խաղահրապարակ, մանկապարտէզի նոր մասնաշէնք:

Էջմիածնի հիմնադրման 2700-ամեակի տօնակատարությանն այսօր մասնակցել է նախագահը Սերժ Սարգսեանը: Վաղ առաւօտեան սուրբ Հռիփսիմէ եկեղեցու հարեւանութեամբ՝ Վազգէն Սարգսեանի աւան փողոցի սկզբնամաս-

կառուցուելու է մարզական համալիր : Սկզբում կը կառուցուի լողաւազանի մասնաշէնքը, յետոյ մարզադահլիճը: Քաղաքում կան մարզադպրոցներ, սակայն իրենց տարածքով աւելի փոքր են: Նախագծի հեղինակ, ճարտարապետ Արմէն Մելքոնեանն է:

Հիմնանորոգումից յետոյ այսօր վերաբացուել է նաեւ էջմիածնի Եղիշէ Թաղեւոսեանի անուան գեղարուեստի դպրոցը, որտեղ սովորում է 215 աշակերտ: Շինարարական աշխատանքների իրականացման համար քաղաքապետարանի պիւտճէից ներդրուել է 9.4 մլն դրամ: Երեխաները սովորում են գեղանկարչութիւն, դեկորատիւ կիրառական արուեստ:

Քաղաքի տօնին լաւագոյն նուէր էր նաեւ քաղաքացիական



սում, բացուեց սպարապետի պրոնզէ կիսանդրին: Ներկայ էին Վազգէն Սարգսեանի ընտանիքի անդամները, որոնց էլ տրուեց յուշարձանի բացման պատիւը: Նախկին վարչապետ Արամ Սարգսեանը գոհունակութեամբ է ընդունել սպարապետի կիսանդրու բացման նախաձեռնությունը հոգեւոր մայրաքաղաքում «Վազգէնի գործը մնայուն է, նա դեռ շատ կը լիշուի պատմության մէջ», ասում է նա:

Յուշարձանը կառուցուել է էջմիածնի քաղաքապետարանի ֆինանսաւորմամբ, որտեղ ներդրուել է 8.6 մլն դրամ, իսկ մայիսի բարեկարգման նպատակով ծախսուել է 26 մլն դրամ: Կիսանդրու հեղինակը հայր եւ որդի Ռուբէն եւ Սեւակ Նալբանդեաններն են, քանդակուել է շատ կարճ ժամանակամիջոցում, սակայն արուել է անհուն սիրով ու նուիրումով: Պրոնզաձուլ կիսանդրին տեղադրուած է տուֆակերտ պատուհանին:

Յոբելեանական տօնի կապակցութեամբ պետական պիւտճէի միջոցներով քաղաքի ծայրամասում

կացութեան ակտերի գրանցման բաժնի վերանորոգուած հանդիսութիւնների սրահի ու աշխատասենեակների բացումը, որտեղ այսօր հանդիսաւորութեամբ կատարուեց ամուսնութեան առաջին գրանցումը:

Էջմիածնի 2700-ամեակի կապակցութեամբ հոգեւոր մայրաքաղաք էին այցելել քոչր քաղաքների բարեկամները: «Մենք միշտ գօրավիզ ենք էջմիածնին՝ մեր կատարած գործերով ու նուիրումներով»,- ասած է Իսի լէ Մուլինոյի փոխքաղաքապետ Արթուր Խանջեանը:

Քաղաքի հիմնադրման յոբելեանական տօնին նուիրուած հանդիսաւոր նիստը բացուեց Արմաւիրի թեմի առաջնորդ տէր Սիոն եպիսկոպոս Աղամեանի օրհնութեամբ: Քաղաքի տօնի կապակցութեամբ մի շարք մտաւորականներ արժանացան էջմիածնի պատուաւոր քաղաքացու կոչմանը: Այսօր նաեւ համագործակցութեան յուշագիր կնքուեց էջմիածնի եւ Ֆրանսայի Շալվիօ Շաւանիու քաղաքների միջեւ:

«ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ՕՐԿԱՆԻԶՄՆԵՐ»



ԱՆԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

10 Հոկտեմբեր 2009-ին, Յիւրիխի մէջ ստորագրուած հայ-թրքական արձանագրութիւնները ակնյայտօրէն երկփեղկած էին հայաշխարհը:

Միշտ ալ հայ-թուրք յարաբերութիւններուն օրակարգը եղած է ինդրայարոյց թեմա հայ կեանքին մէջ: Այս յարաբերութիւնները դիւանագիտական պաշտօնականութենէ, քաղաքական հարկադրանքէ, առեւտրա-տնտեսական գործարքներէ եւ բանականութեան պարտադրած սառնասրտութենէ անդին՝ բարոյահոգեբանական ծանրակշիւ գործօն մըն է, որուն մէջ ներքաշուիլ՝ պիտի նշանակէր առեւտուիլ պատմութեան սեւ անցեալին հետ, վերապրիլ ցեղասպանութեան արհաւիրքը, վերջիչել նիւթաբարոյական մեր անգնահատելի կորուստները եւ հաշիւ տալ անշիւրիմ նահատակուած հազարաւոր մեր հարազատներու անմխիթար ոսկրաքիթն եւ աճիւններուն:

2009-ին հայ կեանքը ճեղքած Յիւրիխի իրադարձութիւնը օրին շատ մեղան հոսեցուց: Ան ցայտօր ուրուականի նման կը շրջի դիւանագիտական ոլորտին մէջ, քանզի ոչ վաւերացուած է հակընդդէմ խորհրդարաններուն կողմէ եւ ոչ ալ ընդմիջտ չբացած է քաղաքականութեան չիշողութենէն. յատկապէս, անոր միջազգային ու միջնորդ քաւորները կը փորձեն կենդանացնել զայն իր սառած կարգավիճակէն:

Ո՞րն է այս յարաբերութեանց ամենախոցելի կէտը: Ի հարկէ, փոխ անվստահութիւնը: Այդ օրերուն, վրդովուած հայ զանգուածներուն կը մտահոգէին երկու կէտեր. - Հայկական Յեղասպանութեան հարց եւ դարաբաղեան հակամարտութիւն: Հայրենի դիւանագիտութեան

ներկայացուցիչները, մեղմացնելու համար հայկական կողմին պոռթկունակ մթնոլորտը, կը հաւատարմացնէին, թէ հայ-թրքական արձանագրութիւնները անջատ գործընթաց մըն է եւ ոչ մէկ առնչութիւն ունի վերոնշեալ երկու կէտերուն հետ: Բայց նոյն այդ դիւանագիտութիւնը դէմ յանդիման կը գտնուէր Յեղասպանութեան ժխտման եւ դարաբաղեան հակամարտութեան առումով յօգուտ Պաքուի զիջումներ կատարելու Անգարայի նախապայմանին: Այսպիսով կը պարզուէր, թէ թրքական կողմին որոշումները պատանդուած են պատմութեան դժիւր անցեալով եւ ստրպէյճանական զգայնութիւններով: Անգարա չի կրնար անկաշունդ կողմնորոշուիլ առանց հաշուի հառնելու ստրպէյճանական զգացումներն ու շահերը:

Սակայն, գոյութիւն ունի հարցին վտանգաւոր երեսակը նաեւ: Վերջերս, Հայաստան-Ատրպէյճան սահմանամերձ շրջաններուն արձանագրուած զինադադարի խախտումները բացայայտեցին մտահոգիչ երեւոյթ մը. Ատրպէյճանի ռազմական կայանքներէն արձակուած հրթիռները կը կրէին թրքական դրոշմը, ինչ որ ցոյց կու տայ թէ թուրքի ազգակցական-եղբայրական սերտակցութենէ աւելի Ատրպէյճանի հետ մշակած է ռազմական լուրջ յարաբերութիւններ՝ ի հարկէ օղակելու Հայաստանը եւ թիրախաւորելու Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետութիւնը:

Թրքական կողմին ռազմական միջամտութիւնը դարաբաղեան հակամարտութեան չի հակասեր 2009-ին կայացած Յիւրիխի հանդիպումի որդիին: Ո՞ւր մնաց հայ-թրքական յարաբերութեանց ցիւրիխեան առ երեւոյթ դրական մթնոլորտը:

Մար.ք էջ 18

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՊԱՐՁ ԿԸ ԴԱՌՆԱՅ՝ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ՊԱՏԵՐԱԶՄԻ Է ԳՆՈՒՄ, ԹԵ ՈՉ

ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Սեպտեմբերի սկզբից հայաստրպէյճանական սահմանի լարումը օրէցօր մեծանում է, որն է ստեղծուած իրավիճակում ելքը, ինչ պէտք է անեն ՀՀ իշխանութիւնները: Այս եւ այլ հարցերի մասին զրուցեցինք քաղաքագէտ Լեւոն Շիրինեանի հետ:

- Սահմանի լարուածութիւնը այս անգամ կարծես անմխաղէպ է, դրան արձագանքել է Ույնիսկ Սերժ Սարգսեանը, ով, եթէ չեմ սխալոււմ, յայտարարել էր, որ միայն Արցախն սպառնացող վտանգի դէպքում կը խօսի: Նա զգուշացրել է Ատրպէյճանին պատժիչ գործողութիւնների մասին՝ առաջին անգամ Լեւոնայի Ղարաբաղն անուանելով Հայաստանի անքակտելի մաս, ինչ սպասել այս յայտարարութիւնից յետոյ: Դրան զուգահեռ միայն համարժէք հակադարձումների մասին կոչեր են հնչում, այդպէր կարող է հասնել կոնֆլիկտը:

- Սերժ Սարգսեանի յայտարարութիւնն աննախադէպ էր, քանի որ նա, այո, յայտարարեց, որ Արցախը Հայաստանի անքակտելի մասն է: Հաշուի առնելով նախագահի ինստիտուտի կարեւորութիւնը, ինստիտուտ, որն ունի պետութեան գլուխ լինելու սահմանադրական իրաւունքներն ու իրազօրութիւնները, ապա դա նշանակում է, որ Հայաստանը վերամիաւորման գործընթաց պէտք է սկսի, այսինքն դա նշանակում է, որ Արցախը Հայաստանի մաս պէտք է յայտարարուի՝ օրէնսդրօրէն: Կամ երկու անկախ պետութիւնների՝ Հայաստանի ու Արցախի միջեւ պայմանագիր պէտք է կնքուի, եւ հակուած եմ հենց այս տարբերակին: Հիմա թէ Սերժ Սարգսեանի յայտարարութիւնն ինչքանով է օգտագործուելու ներքին եւ արտաքին հարթութիւններում, չեմ կարող ասել, բայց այն, իսկապէս, աննախադէպ է:

Ինչ վերաբերում է կանխարգելիչ գործողութիւնների մասին Պաշտպանութեան նախարարութեան յայտարարութիւններին, պարզ է, որ առանց նախագահի համաձայնութեան դա հնարաւոր չէ, քանի որ երկրի գերագոյն գլխաւոր հրամանատարն էլ հենց նախագահն է: Եթէ յիշում է դեռ անցած տարուանից, երբ կրկին լարումը մեծ էր, եւ պնդում էի, որ պէտք է կանխարգելիչ ստրատեգիական այդ գիծը վերցնել: Ըստ էութեան ՊՆ-ն, իհարկէ, իմ ասելով

չէ, որ վերցրել է, բայց վերցրել է: Սա դէպի խաղաղութիւն տանող ճանապարհն է այն իմաստով, որ եթէ Ատրպէյճանն իրօք պատրաստ չէ պատերազմի, որովհետեւ ես նրանց հակառակ յայտարարութիւններին այդքան էլ չեմ հաւատում, ուրեմն դա Ատրպէյճանին զսպելու միակ ուղին է: Մնում է ապրել եւ տեսնել, եթէ Ատրպէյճանը շարունակի գործողութիւնների տեմպը մեծացնել, իր էջը քշել, ուրեմն պիտի եզրակացնել, որ նա լայնամասշտաբ պատերազմի է գնում, եթէ ոչ, ուրեմն պէտք է քիչ-քիչ թուլացնի:

- Այս իրավիճակում ի՞նչ գնահատական կը տաք միջազգային հանրութեան պահուածքին, կամ գուցէ լուրթեանը, միայն Սինսկի խմբի համանախագահների յայտարարութիւնը լսուեց, որը խօսում էր իրենց անգորութեան մասին:

- Միջազգային հանրութեան արձագանք չեմ լսել, բայց մենք չպէտք է դրան նայենք, որովհետեւ մենք երկու հարիւր տարի ահանջներս կախ անընդհատ միջազգային հանրութեան արձագանքին ենք սպասում, իսկ արդիւնքները քաջ յայտնի են՝ ցեղասպանութիւն եւ այլն:

Ես ուրիշ բան կ'ուզէի ասել, որ քանի որ նախագահի յայտարարութիւնը բոլորովին այլ հարթութիւն է բացում, ապա հայտնութիւնը պէտք է ինդիւրները լուծելու այլ ճանապարհ ընտրի: Յեղասպանութիւն, թուրքական կողմից փոխհատուցում եւ այլն, այս բոլոր ինդիւրները պէտք է փորձել լուծել Հայաստանում, Արեւելեան Հայաստանը պէտք է դառնայ կիզակէտ երկու պետականութիւնների, ուրիշ ճանապարհ չկայ, սա կարող է որոշ մարդկանց դուր չգալ, բայց համազգային ինդիւրը այսպիսին պէտք է դառնայ: Մենք չենք կարող եթերային երկրի համար մտածումներ ունենալ եւ գործ չանել Արեւելքում: Պէտք է կեդրոնացնել բոլոր ռեսուրսները՝ նիւթական, բարոյական, լրբբինգի, որպէսզի պետութեան կազմակերպման միջոցները կենտրոնանայ այստեղ: Ես ենթադրում եմ, որ Ռուսաստանն է այս ամէնի հետեւում կանգնած, ոչ թէ հրահրում է, այլ այնպիսի վիճակ է առաջացնում, որ երկու կողմը չեն կարող չկուտել ու իրենց փորագրաւն այստեղ խաղաղարար ուժերի տեղակայումն է:

Մար.ք էջ 18

Advertisement for Bedros S. Maronian and Siamanto B. Maronian insurance services. Includes contact information for three locations in Los Angeles, Pasadena, and Glendale, and a list of services such as Life Insurance, Estate Planning, and Workman's Compensation. Features a cartoon illustration of a man in a suit and the text 'Insurance coverage can help you financially!'.

ՄԱՅՔԸԼ ԱՐԱՄԻ «ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ՔԱՆԴԱԿԻՆ ԲԱՑՈՒՄԸ



Երեքշաբթի Հոկտեմբեր 6, լյետ միջօրէի ժամը 6:30-ին, Նիւ Եորք քաղաքի սրտին վրայ գտնուող առաջնորդանիստ գեղակերտ Ս. Վարդան Մայր Տաճարի շրջափակին մէջ՝ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան մասնաւոր արարողութեամբ օրհնեց եւ բացուց լիցիտարեց հանրաձայնօթ արուեստագէտ Մայքըլ Արամի «Գաղթականութիւն» քանդակին: Ներկայ էին մօտ 400 հրաւիրեալներ:

Բազմաթիւ պատուաբեր մրցանակներ շահած արուեստագէտ Մայքըլ Արամի մեծ ծնողները

ցեղասպանութենէն վերապրողներ են: Հայկական զարդերով պատրաստուած անոր ընտանեկան առարկաները միջազգային ճանաչումի արժանացած են եւ Ամերիկայի 50 նահանգներու ծանօթ վաճառատուներու մէջ փնտրուած իրեր են: Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին եւ Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով, Մայքըլ Արամ «Գաղթականութիւն» խորհրդանշական քանդակը պատրաստած է: Փայլուն պողպատեայ պատուանդան մը՝ որուն մէջտեղը Պատմական

Շաբ.բ էջ 19

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՄՈՒՏՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ



ԱՆԻ ՄՄՐՍՄԷԼԵԱՆ

Շաբաթ, 12 Օգոստոս 2015ին ընթացք առաւ Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ դպրոցի վերամուտը: Ամարուայ արձակուրդէն վերադարձող հին ու նոր սաները կրկին անգամ մէկտեղուած էին իրենց սիրելի դպրոցի շրջափակէն ներս՝ սիրոյ ու կարօտի զգացումներ փոխանցելով իրենց դասընկերներուն եւ ուսուցչուհիներուն: Տնօրէն Պրն. Նորայր Տատուրեան ողջունելով աշակերտներն ու ծնողները բեղմնաւոր ուսումնական տարեշրջան մաղթեց դպրոցի բոլոր սաներուն:

Ներկայացնելէ ետք ուսուցչական կազմը, Պրն. Տատուրեան ընդգծեց շաբաթօրեայ դպրոցի կարեւորագոյն դերը հայապահպանման սրբազան գործին մէջ, ապա՝ ներկայացուց հերթական աշխատանիս-

Եթէ պիտի տեսնենք, թէ միմիկ ենք եւ մեր կեանքի պարունակին մէջ շալկած ենք շատ «ծանրութիւն», բայց նաեւ պիտի անդրադառնանք, թէ անհրաժեշտ է որոնել մեր «Ելքի ճամբան»... Եւ «Ելքի ճամբան» իրարու հետ եւ միմիկ ըլլալու գիտակցութեան մէջ է... Թէ՛ հայը կրնայ տարբերիլ մէկը միւսէն, եւ կամ կրնայ վիճիլ ու դեռ տարակարծիք ըլլալ: Բայց այդ բոլորէն վեր, հայը պիտի

Շար.ը էջ 17

Կազմակերպութեամբ՝
ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 Lnu Ամճելըսի մասնաճիւղին

Գործակցութեամբ՝
 ՊՈԼՍԱՅԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ (AIWA)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՍԻՐԱՆ ՍԵՉԱՅԻ

ԳԻՐԸ ԾՆՆԴՈՑ
ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿԵԱՆՔԵՐ
 Ընդ հրատարակուած հատորներուն

Ելոյթ կ'ունենան՝
ՍԱՐԻԱ ՔՐԻՍԵԱՆ - ԳԻՐԸ ԾՆՆԴՈՑ
ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՏԱՅԵԱՆ - ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿԵԱՆՔԵՐ

Սրտի խօսքեր՝
ՍԻԼՎԱ ԲԱՉԻԿԵԱՆ
ՈՌԱՍԻՆ ՄԱՏՈՅԵԱՆ
ԱՆԻ ԲԻՓԵԼԵԱՆ
 ՊԱՏԿԵՐՆԵՐ ՊՈԼՍԱՅԱՅ ԿԵԱՆՔԵՆ...
 Սահիկներու ցուցադրութիւն

Հանդիսավար՝
ՆԱԶԻԿ ԳՈՏԱՅԵԱՆ

Գեղարուեստական պատշաճ յայտագիր

ՀԻՆԳՇԱՔԹԻ, 5 ՆՈՅՏԵՄԲԵՐ, 2015
 Երեկոյեան ժամը 7:00-ին

Թ.Մ. Սիւրբեան ՊԵՇԿԵՐԻՍԻՆԻԱՆ ԿԵՂՐՈՆ
 1901 N. Allen Ave., Altadena, CA 91001

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ **ՄՈՒՏԵՐ ԱԶԱՏ**

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՍՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ ՍՈՒՇ

ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

«Մուշ» անունը յառաջ եկած է «մշուշ» բառէն: Ըստ հայկական աւանդութեան, հայոց Աստղիկ չԱստուածուհին, որուն մեհեանը Մուշէն 30 քմ. դէպի հիւսիս կը գտնուէր, ամէն առտու կը հրամայէր որ մշուշ իջնէ Եփրատ գետի աջ հատակին վրայ, որպէսզի իր Աստուածային գեղեցկութեամբ օժտուած մերկ մարմինը ծածկէ շրջանի կտրիչ տղոց կայծկտացող աչքերէն եւ ինք կարենայ իր առաւօտեան լոգանքը առնել Եփրատի մաքրամաքուր ջուրերուն մէջ: Օդերեւուծութեանները կ'ըսեն որ մշուշը արդիւնքն է Չուրի, օդի հոսանքներու, ճնշումի, Չերմութեան եւ այլ երեւոյթներու: Աշխարհագրական որեւէ վայրի համար օդերեւուծութեաններու այս բացատրութիւնը ճիշտ է բացի Մուշի մշուշի պարագայէն: Եթէ օր մը մեր ալ հաւատքը այնքան մը զօրանայ, ինչպէս որ էր մեր նախնիներունը, մենք ալ պիտի կարենանք Աստղիկ չԱստուածուհին քողարկուած գեղեցկութիւնը վայելել ոչ միայն Մուշի շրջանի Եփրատ գետի ափին, այլ եւ մանաւանդ մեր հոգիներուն խորը թաղուած մեհեաններուն մէջ ...

Էրզրումէն դէպի Մուշ երկարող բնութիւնը պարզապէս զգլխեցուցիչ էր: Բնութեան այս գեղեցկութիւնը չեմ կրնար բառերով բացատրել: Բարձրաբերձ լեռներն ու անդնդախոր ձորերը, բազմաթիւ գետակներու մրցումը Եփրատ գետ հասնելու եւ իրենց գոլալ ջուրերով ստեղծած գունաւոր գեղեցկութիւնը, կանաչապատ դաշտերը, ճերմակ ամպերով պարզարուած կապոյտ երկինքը, «գորն ասեմ, գորն խոստովանեմ»... Չմոռնանք որ այդ բոլորը մերն էին: Հիմա, արժամապէս գորցուած է մեզմէ, բայց պիտի գայ օրը, պիտի գա՛յ օրը, երբ, եթէ ոչ մենք, ապա մեր զաւակները, եթէ ոչ մեր զաւակները, ապա մեր թոռները կամ ծոռերը պիտի վերադառնան եւ տեր կանգնին այս սրբազան հողերուն:

Թուրքիոյ մէջ նշմարեցի որ մեծ քաղաքները իրարու միացնող ճամբաներուն վրայ մասնաւոր փոքր շուկաներ կան, «հանգստարաններ»ով (rest area), ուր կրնայիր «հանգստանալ», պող ջուրով եւ օճառով լուացուել եւ լեմոնի անուշահոտով օծուել: Այս վայրերը ունէին նաեւ ուտելիքներու եւ տեսակաւոր պիտակեղէններու եւ յուշանուէրներու կրպակներ, փոքր ճաշարաններ, սրճարաններ, եւ այլն: Շատ մաքուր լուացարաններ էին որոնք օրը քանի մը անգամ կը մաքրուէին առատ ջուրով: Հազիւ զբօսաշրջիկներու պատեր կանք առնէին, երիտասարդ տղաք ամնիջապէս կը սկսէին պատերը լուալ: Անվճար էր, բայց շարժաւարը կամ խումբի պատասխանատուն քանի մը թրքական լիւրա «պախշիշ» (նուէր) կու տար: 2012-ին երբ Արշակ Տիգրանեան վարժարանի աւարտական դասարանի աշակերտներուն հետ Հայաստան կը գտնուէի «Համպիլի Թուր»-ի տէր եւ տնօրէն Պրն. Համպիլի Մաթիսեանին հետ, ըսաւ որ ինք, որպէս յաճախակի զբօսաշրջիկներու խումբեր Հայաստան բերող, միշտ գօտուարութեան կը հանդիպի իր խումբի անդամներուն, մանաւանդ տարիքաւորներուն, «հանգստա-

նալու» վայրեր գտնելու: Ըստ Պրն. Մաթիսեանի, Հայաստանի տարածափն զբօսաշրջիկներու գործածած ճամբաներուն վրայ եօթը (7) «հանգստարան»ներու պէտք կայ: Պրն. Համպիլի Մաթիսեանը Հայաստանի զբօսաշրջիկութեան պատասխանատուներու հետ խօսած է այս մասին եւ նոյնիսկ առաջարկած է որ ինք, բոլորին համար, իր հաշուին, որպէս նուէր, հատ մը շինէ, որպէս նմուշ, եթէ կառավարութիւնը հողը տրամադրէ: Իրեն ըսուած է որ ինք հողն ալ պէտք է գնէ որպէսզի իրեն արտօնուի նման կառուց մը շինել: Տակաւին կը սպասեմք այն երջանիկ օրուան երբ Հայաստանի զբօսաշրջիկութեան պատասխանատուները յարմար վայրերու մէջ նման հանգստարաններ, «Rest Area»ներ կառուցեն: Երգ մը կայ կը յիշե՞ք «Դու սպասիր ես կը գամ...»:

Չորրորդ դարուն, Գրիգոր Լուսաւորիչ Աշտիշատի մէջ գտնուող մեհեանները քանդելէն ետք տեղույն վրայ կը շինէ Առաքելոց վանքը, որը շրջան մը կը ծառայէ որպէս Հայաստանեաց Եկեղեցու կեդրոն, մինչեւ որ վաղարշապատի մէջ կառուցուի Սբ. Էջմէածինը: Առաքելոց վանքը շուտով կը դառնայ ուսումնական մեծ կեդրոն: Այս վանքը նշանաւոր է նաեւ Անդրանիկ Փաշայի հերոսական դիմադրութեան թրքական 5000-նոց բանակայիններու դէմ:

Մուշի շրջանը նշանաւոր է ե՛ւ Սուրբ՝ մեզի համար, քանի Հացեկացի մէջ (Մուշէն 15 քմ. դէպի հիւսիս արեւելք) ծնած է Սբ. Մեսրոպ Մաշտոցը: Նոյնպէս, հայոց պատմահայրը, Մովսէս Խորենացին, ստեղծագործած է թաղուած է Առաքելոց վանքին մէջ:

Մուշը շրջան մը պատկանած է Մամիկոնեաններուն, ապա Բագրատունիներուն, եւ վերջապէս՝ Օսմանցիներուն:

Համաշխարհային Առաջին Պատերազմէն առաջ Մուշի շրջանին մէջ կ'ապրէին շուրջ 60,000 հայեր: Թուրքերն ու Քիւրտերը սակայն, իրենց «իրաւունք» վերապահած էին հայերը կեղեքելու, կողոպտելու, աղջիկները արեւանգելու, բռնաբարելու, սպաննելու եւ ամէն տեսակ խժգժութիւններ գործադրելու: Յունիս 26, 1914-ին, Մուշի կառավարիչին հրամանով բոլոր հայ տղամարդիկը գորակոչուեցան: Երբ երիտասարդները գացին, թուրքերը աւելի քան 2000 տարիքաւոր մարդոց հաւաքեցին եւ դէպի Ուրֆա աքսորեցին: Ճամբան սակայն, մարաններու մէջ յարդ լեցուցին, քարիւղով «օծեցին» եւ հայերուն ողջ-ողջ այրեցին: Երբ 1916 Փետրուարին Ռուսական բանակի զինուորներն ու հայ կամաւորները Մուշ մտան, շատ քիչ հայերու հանդիպեցան հոն որոնք սպանդէ ազատուելու համար իսլամացած էին: 1915-ի աքսորին, Մշեցիները Սբ. Առաքելոց եկեղեցիին քանդակներով գեղեցկացած մեծ դուռը շալկած միասին տարին Հայաստան ուր այդ կը պահուի մինչեւ այսօր: Կրնա՞ք այդ մարդոց հաւատքը երեւակայել: Աքսորի ճամբաներուն համար հաց եւ ջուր տանելու, եկեղեցիին դուռը շալկած ճամբայ ելած են: Ես կը խոնարհիմ ալ այդ բարի, պարզուկ բայց տեսիլք ունեցող հերոս գիւղացիներուն առջեւ:

Այցելեցինք Եփրատ գետի վրայ

նետուած «Սուլուխ»-ի կամուրջը: 1915-ին, հազարաւոր հայեր այս կամուրջին վրայէն անցնելով քաղցին մինչեւ իրենց սպանդանոցը: Հոս, թուրք ոստիկանները մէկ-մէկ կը ստուգէին աքսորուող հայերը որպէսզի որեւէ մէկը չպահուէր...:

Մուշի կեդրոնէն մօտ կէս ժամ հողածածք ճամբայ մը քաղցով գացինք Սբ. Աստուածածին եկեղեցին: Աւերակ այս եկեղեցիի պատերը սակայն կը վկայէին իրենց անցեալի փառքը: Քարուքանդ եղած դռնէ մը մտանք ներս: Տանիք չկար («Եկեղեցին հայկական, մէն մի քարին տակ գետնի, Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»...): Հոս՝ բաց էր երկինքը, «գաղտնի ճամբայ» չկար: Քանի որ Չարդուած Մշեցիներու անգերեզման մասունքներուն վրայ ծաղիկ բերող չէ եղած, եկեղեցիին մէջ, աղբերու տակէն տեսակաւոր եւ գունաւոր ծաղիկներ բուսած էին ի յարգանք եւ ի յիշատակ Մշեցի նահատակներուն: Հողը կուլար իր գաւակները, իր տէրերուն սպանդը, բայց գիտէր նաեւ յարգել զանոնք:

Դարձեալ Դուրս. Կարպիս Տէր Եղիայեանի առաջարկով եւ Երեցկին Սանտրա Առաքելեանի եւ Գէորգ Յակոբեանի առաջնորդութեամբ «Տէր Ողորմեա»ն եւ «Հայր Մեր»ը երգեցինք: Չեմ գիտէր, Աստուած լսե՞ց արդեօք մեր աղօթքը: Երբ ասիէ հարիւր տարի առաջ հայ մանուկներու անմեղ, միւռոնաբոյր շրթներէն այս աղօթքները կը բարձրանային առ Աստուած, երբ կաթնաբոյր պատանիներն ու աղջիկները սարսափահար կը դիմէին Աստուծով ստոյգ մահէ փրկուելու, երբ վարդաբոյր հարսերն ու խնկաբոյր մամիկները կ'աղօթէին, երբ հողաբոյր մեր հայրերն ու պապիկները ծնկաչոք կ'աղերսէին առ Աստուած, արդեօք Աստուած լսե՞ց անոնց աղերսանքը

որ հիմա, մեր, զբօսաշրջիկ - ուխտաւորներու աղօթքը լսէ...: Իրաւունք ունինք ընդվզելու թէ ոչ պարզապէս պիտի ըսենք Աստուծոյ կամքն էր այդե, կամ մեր խելքը Աստուծոյ գործերուն չի հասնիր: Չէ? որ Աստուածաշունչը կ'ըսէ որ ,տերեւ մը անգամ չի շարժիր առանց Աստուծոյ կամքին... Որեմն, ինչպէ՞ս շարժեցան հարիւր հազարներով թուրքերուն եւ քիւրտերուն արիւնաթաթախ, մահասփիւռ ձեռքերը:

Սբ. Աստուածածին եկեղեցիին շրջակայքի բոլոր տունները հայապատկան էին: Կարգ մը տուններ փլատակ վիճակի մէջ էին տակաւին, ուրիշներ՝ բնակեցուած թուրքերու կամ քիւրտերու կողմէ: Բնութեան ծոցին մէջ, բլուրներու կանաչապատ լանջերուն հանգչած շատ աղուոր տուններ էին: Տակաւին նորոգութիւններու չէին սկսած: Կանուխ էր: Հաւանաբար յիսուն տարի ետք նորոգութիւնները սկսին... :

Երբ քիչ մը ընդվզած եկեղեցիէն դէպի պատ կը քալէինք «պաճախախ» Գէորգ Յակոբեանին հետ, ինքնաշարժ մը կեցաւ եւ վստահաբար հասկնալով որ հայեր ենք եւ եկած ենք մեր եկեղեցիին քանդումը ողբալու, թրքավայել ժպիտով մը «խօշ կէլտիւրի» (բարի եկած էք) ըսաւ: Ըսինք որ մենք հայ ենք եւ հարցուցի որ ինք կամ իր մեծ հայրը հա՞յ է: Ոչ ըսաւ, թուրք եմ, եւ առաջարկեց որ մեզ պտտցնէ: Չեմ կրնար ըսաւ ձեզ ճաշի տանիլ որովհետեւ Ռամազանի մէջ ենք, բայց ըսաւ, եթէ սպասէք մինչեւ իրիկուն, մեզի կ'երթանք եւ քէֆ կ'ընենք...: Պատասխանեցի իրեն ըսելով որ եթէ իրենք քիչ մըն ալ սպասեն, «պիղ պինլերճէ կէլէճիլք վէ սօնա քէֆ էտէճիլք» (մենք հազարներով պիտի գանք եւ վերջը քէֆ պիտի ընենք), հասկցա՞ւ ըսածս,

Շաք. Էջ 17

The Cotsen Institute of Archaeology at UCLA announces

The 2nd Hampartzoum and Ovsanna Chitjian Conference in Armenian studies:

“Armeno-Persian Relations and the Persarmenian Community Throughout the Ages”

Saturday, November 14th, 2015. 11:00 AM – 5 PM

Featured speakers:

Dr. Marco Brambilla: “The Architecture of the Houses of the Armenians in New Julfa.” (University of Rome)

Prof. Touraj Daryee “Reflections on the History and Society Arshakuni Armenia and Arsacid Iran.” (UC Irvine)

Ms. Kristine Martirosyan-Olshansky: “Prehistoric Connections between the Inhabitants of the Armenian Highlands and the Iranian Plateau.” (UCLA).

Prof. Bert Vaux “The Armenian Dialect of Salmast.” (University of Cambridge)

To be held on UCLA campus in Royce Hall, Room 314

Free Admission.

Paid parking available in Structure 4 or 5. \$12.

RSVP required for luncheon: <RSVP@ioa.ucla.edu>

This Conference is dedicated to the memory of Archbishop Gorun Babian (1941-2015), Prelate of New Julfa (1978-2002).

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՌԹԻ ՆԱ ԳՐԶՈՎ ԵԿԱՎ՝ ԱՆՅԱՂԹ ԶԵՆՔՈՎ...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Հոկտեմբեր ամիսն ենք ապրում իր աշնանային թովիչ շունչով եւ բնութեան նախշուած տեսարաններով: Մեր հայերիս մօտ հոկտեմբերը նշանաւորուած է մշակոյթի ամսով, դպրութիւն եւ մշակոյթ կերտողներին նուիրուած ամիս: Մշակոյթ ասելով հասկանում ենք հոգեկան եւ մտային արժէքներ, սովորութիւններ եւ աւանդութիւններ: Հնադարեան մեր մշակոյթը հարուստ է իր միջուկընդերքով եւ կոթողներով, ահա նրա մագնիսական ուժի շնորհիւ է, որ հայը իր փոթորկալոյզ դարաշրջանների ոլորտներում նոյնիսկ կարողացել է գոյատեւել եւ մեր ժամանակների բարդ իրավիճակին հասնել ու ստեղծել պետականութիւն: Դպրութիւն եւ մշակոյթ առանձին տերմիններ չեն, դպրութիւնը մշակոյթ կոչուած գանձարանի աղամանդեայ մէկ ճիւղն է կազմում:

Մշակոյթի ճառագայթող հիմնաքարը պատկան ժողովուրդն է իր տաղանդներով ու ձիրքերով, դպրութեան առանցքն է կազմում լեզուն եւ լեզուամտածողութիւնը: Մեր հայերիս լեզուն հայերէնն է, այբուբենի արարիչը՝ Սբ. Մեսրոպ Մաշտոցը գայն կեանքի կոչելով 406 թ.: Մեսրոպեան տառերի գիւտով հիմքը դրուեց հայոց դպրութեան, եօթնամանից թարգմանուեց Աստուածաշունչը Սբ. Սահակ կաթողիկոսի ջանքերով, որը գերազանհատուեց որպէս «Թագուհի թարգմանութեանց», նաեւ թարգմանիչ վարդապետների միջոցաւ թարգմանուեցին բազմաթիւ կրօնական եւ այլ գրքեր: Տառերի գիւտով եւ ինքնուրոյն դպրութեան կայացումով հունաւորուեց հայ ժողովրդի յաւերժի երթի ճամբան:

Փառք ու պատիւ նրանց լուսապսակ յաւերժ յիշատակին: (Սուրբ Մեսրոպ Մաշտոցին ձօնուած իմ պոէմը՝ «Փառքը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի»-ից մի պտղունց հատուած է ներկայացում):

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Տարօն գաւառի Հացեկաց գիւղում, Ծիմական վարդանի ընտանիքում, Յամի տեառն 360 թուականին, Մի մանուկ ծնունց:

Նրան մկրտեցին Մեսրոպ անուն, Յետոյ անուն-ազգանուն ընդելուզուած, Ոնց ջահը ժամի լոյսերով փնջուած, Յորջորջուեց Մեսրոպ Մաշտոց անուն:

Նրա տաղանդն ու ձիրքն անթեղուած, Մի օր պիտ բոնկէր ի սէր հայրենի, Հայոց համար շակատագիրն ընտրէր, Յաւերժ կեանքի նամբան առաջնորդէր:

Անյոյս վիճակին յոյս, հաւատն անբռնչէր, Սեփական դպրութեամբ ազգը գիւնէր, Լուսոյ տանարներ ամենուր հիմնէր,

Հայաստան աշխարհը լուսաւորէր:

Երկնեց հայագի, խորհրդաւոր նշանագրերը, Հայի արիւնից ու էութիւնից ծնուած գրքերը, Հայի հոգու պէս գեղեցիկ ու արեւոտ տառերը, Հայի հաւատքը նառագայթող Աւետարանը:

Նրանք լոկ չոր ու ցամաք գրեր չեն, Մէկ-մէկ ներհուն ուժ են գրերնական, Մէկ-մէկ նառագայթ են արեւազունը, Մէկ-մէկ գագաթ են լեռան Արարատ:

Նա տառապանքով, բայց սիրով արարեց գրեր, Անարիւն գէնք, գողող, առիւնքնող եւ արեւային, Խաւարակոտ մտքերը լուսաւորող փարոսներ, Հայոց սրտերը միացնող պատգամերկնային:

Հայի Աստուածը նրան օգնեց, Արարումի ձիրքն ու տաղանդ տուեց, Որ հայի հաւատքն անեղծ պահի, Որ հայ սրտերի կապը ջերմ պահի:

Ճգնութեամբ կեանքը արգասաւորուեց, Ամէն կողմ լուսոյ նրագներ վառեց, Հրաշագեղ տառերը լուսապայծառ, Ճառագեցին յաւերժութեան

նամբան: *****
Տօն է՝ խնդութիւն, երգն է հնչում գեղեցիկում, Բամբիր, տաւիղ եւ եօթնադիբնարն է նուագում, Երգում են գուսանները, գովեն են անում Մեսրոպի, Որ իր գիւտով նոր շունչ ու բոխէր բերում հայերին:

Հայոց հողի արեւահամ գիւնին է շէկ կարասներում պղպղում, Գաւաթները ուրախ ու գուարթ ձեռքից ձեռք են անցկացւում, Կաթողիկոս, արքայ եւ պալատականներ կենաց են խմում, Ողջունում են Մեսրոպին գոհար խօսքերով փառաբանում:

Այսպէս օրեր խանդավառ, Մար.ք էջ 19

ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES PRESENTS

ODE TO ARMENIA
ԶՕՆ ԲԱՅԱՍՏԱՆԻ

We Remember and Demand

COMMEMORATING THE 100TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅ

Armenian Society of Los Angeles Choir
 "Los Angeles Symphonists" Orchestra
 Music Director: Mikael Avetisyan
 Soprano: Nune Genjoyan
 Tenor: Suren Mkrtchyan
 Duduk: Ruben Harutunyan
 ISM Youth Choir
 Choirmaster: Lusine Meliksetyan

Լուս Անճելլոսի Իրանահայ Միութիւն
 Լուս Անճելլոսի Միմֆոնիք Նուագախումբ
 Ղեկավար՝ Միքայէլ Աւետիսեան
 Սօփրանօ՝ Նունէ Գէնճոյեան
 Թենոր՝ Սուրէն Մկրտչեան
 Դուդուկ՝ Ռուբէն Ծարոյիսեան
 Իմքայալար՝ Լուսինէ Մելիքսէտեան

October 25th, 2015 at 7:00pm.
Glendale Presbyterian Church
125 S. Louise St., Glendale, CA 91205

Ticket info & Reservation: (818) 241-1073

ԻՆՉՊԵՍ ՄԵԾՑՆԵԼ ԿԱՄՔԻ ՈՒԺԸ

Թէեւ շատերը կը կարծեն, որ կամքի ուժը բնածին տրուած երեւոյթ է՝ հոգեբանները կը պնդեն, որ անհիկա կարելի է աւելի մեծցնել ու աւելի կամային դառնալ: Այսպիսով, ինչ պէտք է ընել կամքի ուժը «մարզելու» համար:

Մտախոհութիւն (meditation)՝ Մտախոհութիւնը որոշ մարդոց համար հաւանաբար կը թուի բաւական ձանձրալի եւ անիմաստ գբադմունք, բայց անհիկա կրնայ օգնել ձեզի կամքի ուժը մեծցնելու հարցով:

Մտախոհութեան առաջին օրերուն, ձեր գիտակցութիւնը պիտի փորձէ խանգարել եւ ստիպել ձեզի յանձնուիլ: Սակայն դուք կրնաք վերահսկել ձեր մտքերն ու ստիպել գիտակցութեան լուել: Ընդունեցէք մտախոհութեան դիրքը եւ խոր շնչեցէք ու արտաշնչեցէք: Քանի մը օր անց դուք պիտի նկատէք, որ դուք աւելի դիւրութեամբ կը կեդրոնանաք ձեր խնդիրներուն վրայ եւ չէք շեղիր:

Հետեւեցէք ձեր կեցուածքին՝ Գիտնականները ապացուցած են, որ աւելի կամային դառնալու համար պէտք է ուղղել կեցուածքը: Ուսումնասիրութիւններուն մասնակցած կամաւորները, երկու շաբաթ հետեւելով իրենց կեցուածքին, դարձած են աւելի կամային, որ պարզ դարձած է յատուկ փորձարկումներու միջոցով: Ուստի, մշտապէս ուղղեցէք կեցուածքը:

Մննդակատն՝ Կամքի ուժին վրայ դրական ազդեցութիւն կրնայ ունենալ նաեւ յատուկ սննդակատնը: Պարզապէս պէտք է ճիշդ ժամանակին ուտել եւ երբեք չշեղիլ սահմանուած վարչաձեւէն:

Հետեւեցէք ձեր խօսքին՝

3 ՀԻՄՆԱԿՈՐ ՊԱՏՃԱՌ՝ ԶԿԱՆ ԻԻՂԸ ԱՇՆԱՆ ԵՒ ԶՄՐԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հիւանդութենէ ամենալաւ պաշտպանութիւնը ժամանակ առ ժամանակ առողջութեան հետեւին է: Բայց, չես գիտեր ինչու, մարդոց մեծ մասը իր առողջութեան մասին կը չի շնչէ միայն, երբ ցուրտ է, եւ կը սկսի վարակիչ հիւանդութիւններու շրջանը: Երբ կը նկատես, որ հանրակառքերը լեցուն են փուշտացող եւ հազացող մարդոցմով, յանկարծ կը հասկնաս, որ մարմինը պէտք է պաշտպանել հիւանդութիւններէն: Լաւագոյնը, ինչ որ կարելի է առաջարկել այդ պարագային, ձկան իւղն է:

Ձկան իւղի բաղադրութեան մէջ կը մտնեն մեծ քանակութեամբ վիթամիններ, հանքանիւթեր եւ օմեկա-3 թթուներ, որոնք անհրաժեշտ են մարմնին՝ անոր լիարժէք աշխատանքին համար: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալներով՝ ձկան իւղի պարբերաբար օգտագործու-

Ասիկա կամքի ուժը փորձելու եւ գայն աւելի ամրացնելու հիանալի միջոց է: Պէտք է հետեւիլ ձեր խօսքին եւ փորձել ճիշդ, պարզ, լակոնիկ, հոմանիշներով հարուստ խօսք օգտագործել:

Այսինքն՝ աւելի գեղեցիկ խօսիլ: Մէկ ամիս անց գրագէտ խօսքը ձեզի համար այլեւս ոչ մէկ դժուարութիւն չի յառաջացներ:

Յստակ նպատակներ՝ Ձեր չիրականացած ծրագիրները բացասական հետեւանքներ կրնան ունենալ ձեր կամքի ուժին վրայ: Սակայն յուսահատելէ առաջ պէտք է հասկնալ, թէ որքան իրական էին այդ նպատակները, որքան միջոց, ուժ եւ եռանդ ներդրած էք անոնց իրականացման հարցով: Բայց այս ամէնէն խուսափելու համար պէտք է յստակ եւ ճիշդ նպատակներ ունենալ:

Մարզուիլ՝ Գաղտնիք է, որ մարզաձեւի մը հետեւին ու մարզումները աւելի կամային կը դարձնեն մարդը: Հետեւաբար, եթէ կը փափաքիք «մարզել» կամքի ուժը, քանի մը ամիս գացէք մարզուելու: Այնուհետեւ ատիկա սովորութիւն պիտի դառնայ ձեզի համար եւ դուք նոյն եռանդով պիտի շարունակէք:

Ուշադրութիւն դարձուցէք ձեր շրջապատին եթէ կը փափաքիք վերահսկել ձեր կամքի ուժը, պէտք է նաեւ ուշադրութիւն դարձնէք ձեզ շրջապատող մարդոց: Կան մարդիկ, որոնք կը սպառեն ձեր ուժն ու կը նուազեցնեն կամքի ուժը: Պէտք է ազատիլ անոնցմէ: Պէտք է շփուիլ այնպիսի մարդոց հետ, որոնք օրինակ, «մարտկոց» ըլլան ձեզի համար եւ զանոնք տեսնելով դուք մեծ եռանդով կը լեցուիք:

մը կը նուազեցնէ սրտի կաթուածի, ինչպէս նաեւ սիրտ-անոթային հիւանդութիւններու յառաջացումը:

Ապացուցուած է, որ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը դրականօրէն կ'ազդէ դիմադրողական համակարգին վրայ: Ըստ որոշ հետազոտութիւններու՝ օմեկա-3 թթուները զգալիօրէն կը նուազեցնեն քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը:

Ձկան իւղը կը կայունացնէ զարկերակային ճնշումը:

Ձայն կը նշանակեն թոքախտի, ռախիտի, անեմիայի պարագային:

Խորհուրդ կը տրուի դաշտանի ցաւի, յղութեան բարդութիւններու պարագային:

Կ'արտօնուի օգտագործել ճարպակալման, շաքարախտի, օսդէոփորոզի, փսորիազի պարագային: Դրական ազդեցութիւն կ'ունենայ ջրային համակարգին վրայ:

ՍՈՒՇ

Շարունակուած էջ 15-էն

չեմ գիտէր: Մուշի հրապարակներէն մէկուն վրայ «Park Locantasi» ճաշարանը կայ որուն տերը հայ է: Դոկտ. Միւնաս Գոճայեանը իր յուշերուն մէջ գրած էր որ շատ համեղ խորովածի տեսակներ կերած են հոն: Մեր «լաւ»

բախտէն, Ռամազան ըլլալուն, ճաշարանը փակ էր: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ես համաթամ ճաշեր, մանաւաղ խորովածներու տեսակներ ուտելը շատ կը սիրեմ, բայց բախտս ...: Մուշի մէջ պատով քիչ մը շրջապայելէ ետք, քիչ մը անօթի եւ բաւական մը անտրամադիր՝ ճամբայ ելանք դէպի Խարբերդ:

ՏԱՐԸ ԵՐԵՒՅԹ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՊԵՏԷ Է ՄԻՇՏ ՅԻՇԵԼ

Ամբողջ կեանքի ընթացքին կը սպասես մէկուն, որ կը հանդիպի եւ կ'ընդունի քեզ այնպէս, ինչպէս որ ես, բայց յետոյ կը հասկնաս, որ դու երբեք ալ առանձին չես եղած, քանի որ դու քեզի ունիս: Քու կեանքդ ՔՈՒ ձեռքերուդ մէջ է եւ ՈՉ ՄԷԿԸ կրնայ երջանկութիւն պարգեւել քեզի: Այս հարցով քեզի կ'օգնեն հետեւեալ տասը խորհուրդները:

80/20-ի օրէնքը Փարէթոյի կամ 80/20-ի օրէնքը կը նշանակէ՝ 20% ջանք եւ 80% արդիւնք, իսկ ուժերու մնացած 80%-ը կու տան 20%-ի արդիւնք: Օրինակ՝ պարտադիր չէ մատանը կամ նկուղը ամէն օր մաքրել, քանի որ անոնք այնքան ալ յաճախ չեն օգտագործուիր, իսկ խոհանոցը կամ լոգարանը ամէնօրեայ մաքրութեան պէտք ունին: Այսպիսով, ձեր բնակարանին մէջ սենեակներու 20%-ը կը պահանջեն ձեր ուշադրութեան եւ ջանքերուն 80%-ը:

Այս պարագային տունը մաքրելու խնդիրը աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծուի: Կեդրոնացիր եւ ժամանակը ծախսէ արդիւնաւէտ գործերու վրայ:

Փարբինսընի օրէնքը Համաձայն Փարբինսընի օրէնքին՝ աշխատանքը կը սպառէ անոր կատարման յատկացուած ամբողջ ժամանակը: Այսինքն՝ եթէ գործատուն մը կը յանձնարարէ մէկ ամսուան մէջ կատարել աշխատանք մը, որ կարելի է աւարտին հասցնել մէկ շաբթուան մէջ, ապա աշխատողը անպայման անհիկա կ'ընէ մէկ ամսուան մէջ՝ դժուարացնելով եւ երկարացնելով աշխատանքը կատարելու գործընթացը: Ան չի կեդրոնանում էակոյն եւ հիմնական խնդիրի լուծման վրայ եւ ժամանակը արդիւնաւէտ ձեւով չ'օգտագործեր: Իսկ եթէ սահմանուած ժամկէտը ըլլայ մէկ շաբաթ, ան պիտի կեդրոնանայ իր գործին վրայ եւ արդիւնաւէտ ձեւով պիտի կատարէ գայն: Այսինքն՝ պէտք է աւելի արագ գործել:

Տալ, իսկ յետոյ ակնկալել՝ Ասիկա ճիշդ հերթականութիւնն է: Սկիզբը պէտք է տալ, իսկ յետոյ ակնկալել, քանի որ միայն այսպէս դու կը ստանաս այն, զոր կը փափաքէիր եւ կ'երագէիր: Յիշէ, աշխարհի վրայ ամէն վայրկեան կ'իրականանայ ունէ մէկուն երազանքը: Վաղը հաւանաբար քու կը կատարուի: Ոչ մէկը երբեք իր

ԻՆՉՊԵՍ ԾԻՇԴ ԶԵՒՈՎ ԸՆԴՀԱՏԵԼ ԶՐՈՅՑԸ, ԶՆԵՂԱՑՆԵԼՈՎ ԶՐՈՒՑԱԿԻՑԸ

Յաճախ պէտք կ'ըլլայ ընդհատել գործնական խօսակցութիւնը, սակայն վախը, որ կրնաս նեղացնել խօսակցիցը, չի ձգեր ընել ատիկա: Ներկայացնենք քանի մը խորհուրդ...

- 1. Շնորհակալութիւն յայտնեցէք (բովանդակալից գրոցի, տեղեկութեան, անկեղծութեան, ժամանակ տրամադրելու համար եւ այլն):
- 2. Հակիրճ ձեւով բացատրեցէք, թէ ինչ մտադիր էք ընել եւ

տուածէն աւելին չէ ստացած: Միայն եւ անյաջողութիւններ՝

Անոնք անգնահատելի փորձ կրնան ըլլալ քեզի համար: Անյաջողութիւնները կրնան խթան դառնալ յաջողութեան ճանապարհին: Միայն երբեք պէտք չէ հիասթափուիլ, անոնք երբեմն կրնան դրական ազդեցութիւն ունենալ կեանքիդ վրայ:

Ծանօթացիր եւ ազատօրէն շփուիր նոր մարդոց հետ՝

Իւրաքանչիւր հանդիպում պատմութիւն մըն է եւ անոր պէտք է լուրջ վերաբերիլ: Եթէ անձանօթ մարդոց հետ կը շփուիս այնպէս, ինչպէս մտերիմներուդ, ուրեմն աւելի ինքնավստահ, աւելի անկեղծ մարդու տպաւորութիւն կը ձգես եւ դրականօրէն կ'ազդես դիմացինիդ վրայ:

Լաւատեսութիւնը կրնայ փոխել իրականութիւնը՝

Յոռետեսութիւնը կը թաքնուի իրականութեան դիմակին տակ եւ միայն լաւատեսութեամբ կրնաս փոխել գայն:

Երախտագիտութիւն՝ պարզ միջոց երջանիկ զգալու համար՝

Հիանալի միջոց շրջապատի հետ լաւ յարաբերութիւններ հաստատելու, անոնց ուրախութիւն պարգեւելու եւ ինչու ոչ, երջանկանալու համար. չէ որ երջանկութեան զգացումը վարակիչ է:

Մի համեմատեք քեզ ուրիշներու հետ եթէ դու քեզ կը համեմատես ուրիշներու հետ, ուրեմն կ'արտօնես, որ արտաքին աշխարհը ղեկավարէ քեզ: Իբրեւ արդիւնք տրամադրութեան անկումը անխուսափելի է: Աւելի ճիշդ եւ արդիւնաւէտ պիտի ըլլայ, եթէ համեմատես նոյնինքն դու քեզ հետ, որպէսզի տեսնես, թէ որքան աճած ես, զարգացած եւ ինչ նուաճումներ արձանագրած ես:

Վախի աչքերը շատ մեծ են՝

Վախերուդ 80-90%-ը երբեք տեղի չ'ունենար: Անոնք միայն կը ծնին եւ կ'ապրին գլխուդ մէջ: Անհանգստութիւնը ժամանակի եւ ուժի անիմաստ կորուստ է:

Ամէն ինչին շատ լուրջ ձեւով մի վերաբերիր՝

Այսօրուան խնդիրներէն շատերը վաղը նոյնիսկ պիտի չի լինեն: Եթէ զգացումներուն եւ միտքերուն շատ լուրջ կը վերաբերիս, կը սպառես ուժերդ: Մտածէ միայն դրական երեւոյթներու մասին:

ցոյց տուէք, որ անմիջապէս ձեռնամուկ պիտի ըլլաք այդ գործին:

3. Խօսակցիցին առաջարկեցէք շտապ որեւէ բան ընել, բացատրելով, թէ ինչու պէտք է ատիկա անյապաղ կատարել:

4. Ոտքի կանգնեցէք, սեղմեցէք ձեռքը, հրաժեշտ տուէք:

5. Այցելուին ուղեկցեցէք մինչեւ դուռը:

6. Գործողութեան մէջ դրէք «փրկութեան մասին համաձայնագիրը» գործընկերոջ հետ:

ՍՈՒՐԵՇԻՆ «ԵԼՔԻ ՃԱՄԲԱՆ»....

Շարունակուած էջ 14-էն

կարենայ ստեղծել ներքին այդ ուժը՝ նոյնինքն իր «ճամբարէններ»... եւ այդ ուժով պէտք է զծէ իր «Ելքի ճամբան»՝ նեղ ըլլայ, թէ պատիկ.

դժուար, թէ խնդրաշարոյց: Եւ հայր պարտի քաղցր այդ «Ելքի ճամբային» միասին եւ իրարու հետ...

Սուրբ չին «Ելքի ճամբան»... Բայց նաեւ իմը եւ իւրաքանչիւր հայունը...

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 20-Ապրիլ 19
Այս շաբաթ գործող տուն վերադարձի, մեծ անակնկալի մը պիտի հանդիպիս, որը քու ուշադրութիւնդ պիտի գրաւէ: Դուն քեզ երբեք առանձին մի զգար, շրջապատուած ես լաւ բարեկամներով: Բախտաւոր թիւերդ են: **04,9,11,22,36**

ՅՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
Այս շաբաթ ծրագիր մը քեզմէ շատ ժամեր պիտի խլէ: Յարձակողական մի ըլլար, այլ՝ մեղմօրէն վարուէ գործաւորներուդ հետ: Շատ լաւ մտածէ առնելիք քայլիդ մասին, որ չզոյջաս: Նախասիրած ինքքերուդ լաւ հոգ տար: Բախտաւոր թիւերդ են: **2,9,15,18,30**

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
Այս շաբաթ ընդհանրապէս ուրախ պիտի ըլլաս: Անտանելի խճողումի մը պատճառաւ՝ պիտի ուշանաս ժամադրութեան մը՝ որը արդէն քեզի ի նպաստ չէ: Մի խուսափիր իրականութիւններէ: Բախտաւոր թիւերդ են: **3,15,24,30,38**

ԽԵՅՉԳԵՏԻՆ Յունիս 21-Յունիս 22
Այս շաբաթ յաջողութիւններդ մեծ ուրախութիւն պիտի պատճառեն ընտանիքիդ անդամներուն: Սրտիդ ցաւերը բաժնեկցիր մտերիմ բարեկամիդ հետ: Արդար եղիր եւ երբեք կողմնակցութիւն մի ըներ: Բախտաւոր թիւերդ են: **2,15,20,28,34**

ԱՌԻԲԾ Յունիս 23-Օգոստոս 22
Այս շաբաթ սխալներդ լաւ աչքէ անցուր եւ ձեւ մը գտիր զանոնք շտկելու: Կեդրոնացումդ միայն գործիդ վրայ թող ըլլայ որ դրական անդիւններ ունենաս: Լաւ գիրք մը կարդա: Բախտաւոր թիւերդ են: **3,14,26,37,38**

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Այս շաբաթ շատ մը հարցեր պիտի պարզաբանուին, պատճառ դառնալով մտքիդ հանգստութեանը: Աւելի վայելուչ ըլլալու ես եւ ինքզինքիդ հոգ տանելու: Անհոգ եւ անզգուշ մի ըլլար: Բախտաւոր թիւերդ են: **1,11,22,30,37**

ԿՇԻՈՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Այս շաբաթ հակառակորդներ պիտի ունենաս գործիդ մէջ, կեցուածքդ մի՛ փոխեր: Եշմարիտ եղիր սկզբունքներուդ մէջ որքան որ ալ անոնք ըլլան «հիմն» կամ «անժամանակ»: Իւրայատուկ անձնաւորութիւն մը ունենալուդ՝ շատ սիրուած ես: Բախտաւոր թիւերդ են: **1,9,12,25,35**

ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Այս շաբաթ օգտակար տեղեկութիւններ պիտի նպաստեն գործիդ կեդրոնացումիդ վրայ: Մարդոց ուշադրութիւնը քու վրայ դարձնելով, քննադատանքի առարկայ կրնաս ըլլալ: Շնորհակալ ըլլալու մի վարանիր երբ յարկ ըլլայ: Բախտաւոր թիւերդ են: **3,26,28,30,31**

ԱՂԵՂՆԱԲՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 20
Այս շաբաթ ընդհանրապէս հանդարտ պիտի ըլլայ: Անձի մը հանդէպ սուտ վկայութիւն մի ըներ: Անցեալի չափանիշները պիտի օգտագործես զաւակներդ պատուիրելու: Նորածնութեան աւելի մօտէն հետեւելու ես: Բախտաւոր թիւերդ են: **2,11,15,26,34**

ԱՅԾԵՂՋԻՐ Դեկտեմբեր 21-Յունուար 19
Այս շաբաթ կարողութիւններդ անկարողութեան պիտի վերածուին, եթէ փորձես զանոնք կիրարկել անձնական կեանքիդ մէջ: Գործատէրդ՝ տպաւորուած քու յաջողութիւններդ, պիտի գնահատէ քեզ: Բախտաւոր թիւերդ են: **8,14,19,28,29**

ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
Այս շաբաթ բազմաթիւ հրաւերներ պիտի ստանաս: Ժամանակդ գործածէ նորոգելու տանդ կարգ մը սենեակները: Վայելէ աշխարհի գեղեցկութիւնը: Սկզբունքներդ մի փոխեր ընդունուած ըլլալու սիրոյն: Բախտաւոր թիւերդ են: **7,9,14,19,20**

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Այս շաբաթ շրջանաւարտական հանդէսի մը ներկայ պիտի գտնուիս: Անկարելի մի՛ պահանջեր ընտանիքիդ անդամներէն: Չաւակներուդ վրայ լաւ ազդեցութիւն ձգելու համար, պէտք է ճշմարիտ ըլլաս վերաբերմունքներուդ մէջ: Բախտաւոր թիւերդ են: **2,8,16,29,33**

«ԱՆՐԱՄԱՏԵՂԵԼԻ ՕՐԿԱՆԻՉՄՆԵՐ»

Շարունակուած էջ 7-էն

Լաւապէս ըմբռնելու համար անցեալի եւ այսօրուան ակնբախ հակասութիւնը պէտք է վերջիչենք 2009-ի շրջանային եւ միջազգային քաղաքական կացութիւնը:

Այդ ժամանակաշրջանին թրքական քաղաքականութիւնը կոծկելով իր հուսիւնը կը փորձէր շղարշուել խաղաղասիրական կարգախօսներով եւ հարեւաններու հետ ստեղծել հանդուրժողական մթնոլորտ մը: «Ձերօ հակասութիւն դրացիներու հետ» նշանախօսքով որդեգրուած վարքագիծը երեւութապէս կը յաջողէր յունական, կիպրական, սուրիական, իրաքեան եւ քրտական գետիներու վրայ: Շրջանային մակարդակով թրքական հեղինակութեան բարձրացումը ակնհերեւ էր: Ինչու չէ, կարգը նաեւ Հայաստանինն էր եւ անոր համար ալ հրապարակ իջան միջազգային «բարեմիտ» կնքահայրներ (ոմանք չիրաւի կը կոչեն՝ ոստիկաններ) յաջողութեամբ պսակելու հայ-թրքական դարաւոր թշնամութեան աւարտը: ԱՄՆ-ի, Ռուսիոյ, Ֆրանսայի, Եւրոպական Միութեան եւ Չուիցերիոյ բարձրաստիճան ներկայացուցիչներուն (արտաքին գործոց նախարարներու մակարդակով) ժպտուն դէմքերը ապացոյց էին անոնց անսահման գոհունակութեան եւ դիւանազիտական յաղթանակ մը կորզած ըլլալու հոգեկան բաւարարուածութեան:

Սակայն, ի՞նչ կը յուշէ միջազգային փորձը այս առնչութեամբ. ինչպիսի՞ դասեր կարելի է քաղել պատմութենէն:

Որքան ալ արտաքին կողմեր, միջազգային հեղինակաւոր կառույցներ թէ՛ գերտէրութիւններ փորձեն հակամարտութիւն մը լուծել առանց հակոտնեայ ուժերուն տրամադրուածութեան, պատրաստուածութեան եւ քաղաքական կամքին, այդ հարցը կը մնայ առկախ կամ կը դառնայ աւելի խճճուած: Առաջին հերթին ինդորոյ առարկայ տարրերը պիտի ձգտին հարցին խաղաղ կարգաւորման, այլապէս այլոց ջանքերը կը մնան ապարդիւն կամ «պարապ վախտի խա-

ղալիք»: Այդօրինակ կնճիւղներ չե՞ն պաղեստինեան-իսրայէլեան թնճուկը, կիպրական հարցը, Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, Աբխազիա-Վրաստան տագնապը, Ալպանիա-Սերբիա լարուածութիւնը: Աւելին, յաճախ արտաքին միջամտութիւններ աւելի կը սրեն տագնապ մը՝ յաւելեալ քարիւղ թափելով սկսած հրդեհին վրայ:

6 տարիներ յուժապէտս չվատնուեցա՞ն անիմաստօրէն որոճալով հայ-թրքական արձանագրութիւնները՝ երբ Անգարայի համար Հայոց Յեղասպանութեան օրակարգին արժարժումը քրէական յանցանք է՝ նոյնիսկ թրքագիւղներու համար. երբ թուրքիա իր քայլերը կ'առնէ աւելի իլհամ Ալիեւին հաճոյանալու քան իր իսկ ստանձնած յանձնառութիւնը կատարելու:

6 տարիներ առաջ մարդիկ շարժեցան կամ քաղաքական լեռին հաշիւներով, կամ առեւտրա-տնտեսական նպատակներով կամ միջազգային ճնշումներու տակ՝ մոռնալով որ հայը եւ թուրքը երբ երկուքով կը խօսակցին ինքնուստինքեան կը միանայ չնշմարուող երրորդ մը, որն է պատմութիւնը իր դառն յիշողութիւններով, իրաւագրկումներով, նահատակներով, կողոպտուած տարածքներով եւ յափշտակուած ինչքերով, դարաւոր տառապանքով ու հեծեծանքով: Ան որ լսէ երրորդին ձայնը, զգայ անոր կտտանքը եւ խորապէս ընկալէ անոր վիշտին ահաւորութիւնը կը համոզուի որ հայ-թրքական յարաբերութեան բարելավման ամէն նախաձեռնութիւն ի սկզբանէ դատապարտուած է, ճակատագրուած է ամուլութեան եւ ճախողութեան:

Ինչ լակոնական պատասխան մը լսեցի վերջերս հարցազրոյցի մը ընթացքին: Ուրեմն, երբ հարց տրուեցաւ ծանօթ թրքագէտ Լուսինէ Սահակեանին իր կարծիքը հայ-թրքական գոյակեցութեան շուրջ, պատասխանը եղաւ այսպէս. «Հայն ու թուրքը անհամատեղելի օրկանիզմներ են»:

Պէտք է՞ 10 Հոկտեմբեր 2009-ի Յիւրիխի «Թատերախաղ»ին հոգեհանգիստը կատարել վերջապէս...:

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՊԱՐՉ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Շարունակուած էջ 7-էն

Մանաւանդ թուրքական ախորժակը հայութեան հանդէպ բոլորս գիտենք: Հարցն այն է՝ արդեօք Ատրպէյճանը պատրաստ է ուսումնական խաղաղապահ ուժերի տեղակայմանն այդ գօտում, կարծես թէ ոչ: Մեր եւ իրենց շահերը համընկնում են: Փոփոխութեան վիճակի մասին հարցեր առաջ քաշելուց զատ հարկաւոր է հակամարտութեան լուծման հայկական կողմի կոնցեպցիան փոխել: Որն է դա:

- Արցախը ներկայացնել իբրեւ բանակցող կողմ:

- Այո, հակամարտող կողմը Արցախն է, Հայաստանը դրա երաշխաւորն է: Ինչու է Հայաստանն ինքը խառնուում այդ գործընթացին: Պէտք է ջանքեր Ղարաբաղին, որպիսի նա դառնայ բանակցող կողմ:

- Իսկ ԱԳՆ-ն այս ուղղութեամբ աղեկատ է իրեն պահով, համահունչ քայլեր անո՞ւմ է:

- Ես չգիտեմ, ինչպէս հայութեան մեծ մասը ես այնքան էլ հիացած չեմ ԱԳՆ-ով: Բայց պնդում

եմ, որ պէտք է կոնցեպցիան փոխուի եւ Արցախը մղուի առաջին պլան, ի վերջոյ սա ոչ թէ հայատրպէյճանական, այլ Արցախ-Ատրպէյճան հակամարտութիւն է:

Ինչու չեն ուզում դա անել, ինչու են հայկական կողմին պարտադրում քաղաքական իրական պատկերից այլ կողմ տեղափոխուել: Որովհետեւ ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ գոյութիւն ունի Արեւմուտքի «ոճիր» հասկացողութիւնը: Դա այն է, որ ընդունեցին բոլոր տասնհինգ հանրապետութիւնների անկախութիւնը, որից յետոյ փակեցին ինքնորոշման իրաւունքի հնարաւորութիւնը: Փոխարէնը հարցը տեղափոխեցին բլեֆների, մանիպուլացիաների հարթութիւն, հիմա սրանք քանի որ Արցախի հարցում չեն ուզում մի քայլ առաջ գնալ եւ իրաւունքը ճանաչեն, մենք պէտք է այդ օղակը ճեղքենք եւ հասնենք մեր ուզածին: Վստահ եմ, որ կենդրոնացուած մտքի աշխատանքի արդիւնքում ամէն ինչ կը գնայ մեր ուզած ձեւով եւ արդարութեան ճանապարհով:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ԶԿԱՐՈՂԱՑԱԻ ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ

Շարունակում է 6-էն

Թիւնը մէկն էր՝ ոչնչացնել մի ամբողջ ազգ, ոչնչացնել նրա մշակույթը»,- ասել է Դեգիրը:

«Արմենալը էս»-ի հարցին, թէ արդեօք այսօր Մերձաւոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձութիւնները չեն փաստում, որ մարդկութեան դէմ յանցագործութիւններ կանխարգելման միակ տարբերակը կատարուած ցեղասպանութիւնների ճանաչումն ու դատաւարտումն է, Դեգիրն ասել է, որ կատարուած յիշողութիւնը պէտք է վառ պահել, քանի որ այն համամարդկային նշանակութիւն է հնչեղութիւն ունի:

«Մարդկութիւնը չկարողացաւ դասեր քաղել Հայոց ցեղասպանութիւնից, եւ այսօր տեղի է ունենում այն, ինչ տեղի է ունենում: Հենց այս պատճառով յիշողութիւնը վառ պահելու աշխատանքը շատ կարեւոր է եւ համամարդկային հնչեղութիւն ու նշանակութիւն ունի:

նակութիւն ունի: Պէտք է շարունակել պայքարը բոլոր երկրներում՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ, այդ թւում, անշուշտ, նաեւ Թուրքիայում: Թուրքիան պէտք է առերեսուի իր յիշողութեան հետ, ճիշտ այնպէս, ինչպէս Գերմանիան: Սա շատ կարեւոր է հաշտեցման համար եւ հենց սա է ֆրանսայի ուղերձի իմաստը: Մենք բոլոր երկրներում հնարաւորութեան սահմաններում արտայայտուած ենք Հայոց ցեղասպանութեան ճանաչման օգտին»,- վերջում ասել է Հարլեմ Դեգիրը:

Հարլեմ Դեգիրը Հայաստանում է՝ մասնակցելու Երեւանում Հոկտեմբերի 10-11-ը կայանալիք Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան նախարարական համաժողովին: Այցի շրջանակում Դեգիրը կը լինի նաեւ Հայաստանի Ֆրանսական համալսարանում եւ հանդիպում կ'ունենայ ուսանողներին եւ պրոֆեսորադասախօսական կազմի հետ:

ՄԱՅՔԸԼ ԱՐԱՄԻ «ԳԱՐՁԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ՔԱՆԴԱԿԸ

Շարունակում է 8-էն

Հայաստանի բռնազրաւուած շրջաններու ձեռով բացուածք մը կայ եւ ուրիշ հարիւրաւոր աղանիներ, երամ առ երամ, կը գաղթեն դէպի օտար շրջաններ: Այս աղանիները առանձին առանձին եւ իրարմէ տարբեր ձեւերով պատրաստուած են արուեստագէտին կողմէ: Ոմանց շարժումին մէջ կարելի է նշմարել զգացուած ցաւը, կորուստի տխրութիւնը եւ ոմանք ալ տարածուած թեւերով՝ ի նշան Յիսուս Քրիստոսի խաչելութեան եւ տառապանքին: Անոնց թոխիքը կը խորհրդանշէ իրենց ծննդավայրէն արմատախիլ եղած եւ աշխարհի չորս ծագերուն ցրուած ժողովուրդի մը պատմութիւնը: Սակայն այս

աղանիներու գաղթին մէջ յուսալից երեւոյթ մը կայ՝ առիթը վերապրելու եւ խոստումը նոր կեանքի Նոր Աշխարհին մէջ:

Արուեստագէտ Մայքըլ Արամ իր խօսքին մէջ ըսաւ. «Այսքան երկար ժամանակ անհաւատալի կերպով ծանր եւ լուռ տխրութիւն մը համակած էր մեր ազգային ինքնութիւնը: Այս քանդակը պատրաստելով ես իրապէս հաղորդակից եղայ մեր նահատակներու եւ վերապրողներու խոր վիշտին: Այս գործս դժուար կերպով պատրաստեցի, սակայն երբ այսօր շուրջս կը նայիմ՝ իմ սիրտս խոր յուզումով կը լեցուի որ մենք հոս ենք: Մենք այն հուներն ենք՝ որոնք ծլան ու ծաղկեցան այդ թաղուած հոգիներէն:»

ՀԱՐԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՍՈՒՄ

Շարունակում է 8-էն

անհրաժեշտ է ճանչնալ գայն, սկզբունքին հաւատացող Պրն. Նորայր Տատուրեանի պատրաստութեամբ ցուցադրուեցան սահիկներ, ծանօթացնելու հայ աշակերտին՝ հայրենի բնաշխարհը, մայրաքաղաք Երեւանը՝ իր առօրեայով, պատմական կոթողներն ու յուշարձանները, խաչքարերը, Հայաստանի լեռնաշխարհն ու հիանալի Սեւանայ լիճը, Մատենադարանը իր «Մեսրոպ Մաշտոց» արձանով, պետական հաստատութիւնները, ազգային խորհրդանշանները եւ ամենէն կարեւորը՝ մեր բանակն ու զինուորականութիւնը: Մեր անկախ պետութեան նուաճումներէն մին համարուող Լեռնային Ղարաբաղի տեսարժան վայրերն յատուկ տեղ գրաւած էին այս սահիկներու ցուցադրութեան մէջ, ուր հայկական դրօշը կը ծածանէր արիւնից ծորած երիզ ԿԱՐՄԻՐՈՎ, երկնքից կտոր մը պոկուած ԿԱՊՈՅՏՈՎ,

հասուն հասկերի շող ՆԱՐՆՁԱ-ԳՈՅՆՈՎ: Բոլոր հանգրուաններու ու տարիքներու պատկանող աշակերտութիւնը հիացմունքով ու ասպրումով կը դիտէր ցուցադրուած պատկերներուն՝ պատասխանելով նաեւ իրենց ուղղուած հարցումներուն:

Տօնակատարութեան փակումը կատարուեցաւ Ե. Չարենցի «ԵՍԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ» բանաստեղծութեան արտասանութեամբ եւ Հայաստանի քայլերգով, վերանորոգելով՝ մեր սիրելի հայրենիքին՝ ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ հաւատարիմ մնալու ուխտը:

Փաստօրէն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաքաթօրեայ վարժարանը իր չորս դասարաններով կը ծառայէ Ս. Գաբրիէլ հովիտի 4-16 տարեկան հայորդիներուն: Դպրոցի առաքելութիւնն է ընտիր գրականութեան առընթեր՝ արուեստի, երգի եւ պարի միջոցով աշակերտներուն տալ հայեցի դաստիարակութիւն ու զանոնք կապել մայրենի լեզուին եւ հայրենիքին:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՐԹԱՆՔ

Տեղեկացանք որ Լաս Վեկասի ՍԴՀԿ «Հայկ Բժշկեան» մասնաճիւղի ատենապետ ընկ. ճորճ Յակոբեան ենթարկուած է անակնկալ վիրահատութեան եւ այժմ կը բուժուի հանգիստի շրջան: Այս առթիւ «Մասիս» մեր շրջանակի անունով շուտափոյթ ապաքինում կը մաղթէ վաստակաշատ ընկերոջ:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՌԹԻ

Շարունակում է 16-էն

Հայոց երկրում, Մասիսների փէշին խմբում, Հայորդիները տօնական՝ Կենացներով հրավառ, Փառ՛ ու պատիւ են մաղթում Մեսրոպ Մաշտոցին: Քայլն առաջին մտածում, Ծրագրում ու մշակում, Արարեց Մեսրոպը վերացած: Ժայթփեց ակն աղբիւրի, Ջուրն առատ յորդեց, Դէպի դաշտերը խոպան:

Հայաստան աշխարհի Գործը լուսաւորութեան Առաջ էր գնում ժրագան՝ Ջանգովն Մեսրոպի: Մնում էր հոգ տարուէր միւս կէսին, Սիրտը կիսում հայոց աշխարհի: Մեսրոպ չէր կարող անտեսել այն՝ Լիւում թողնէր կէսը հայութեան:

Մեծերի սիրամեծով ենք գոյատեսել, Երախտապարտ մեր ժողովուրդը Նրանց յիշատակին յաւերժ Ձեռակերտ ու հոգեհատոր Հրաշալի կոթողներ է նուիրել, Նրանց անլուծելի դողալը քաղցրահունց Յար լսելի եւ տեսանելի է դարձրել: Գիտեմ գնահատել, Բայց չգիտեմ դաս առնել մեր մեծերից, Վախն ու կախումները ջնջեմ մեզանից Օտարը մեզ համար սիրտ չի մոմոացնի, Օտարը մեզ կթու կով է ուզում: Քիչ օտարներին հպատակ լինեմ, Օտարն է մեզ ջլատում, Անցեալի մեր պատմութիւնը Լի կորուստներով՝ Սյա անգոհ վիճակին ենք հասել: Անցեալից դաս առնեմ,

Սխալները չկրկնեմ, Ապրեմք քաջ ու պատուական՝ Մէկ լինեմք, վարարուն՝ հուժկու գետ, Դէն թափեմք խարխուլ պատնէշները օտարամէտ, Մեր այս անյոյս օրերին ի տես Մի նոր Մեսրոպ կուգեմք, Կարիքը խիստ զգալի, Հայահաւաքով ու հողահաւաքով

Հային ուրախութիւն, վստահութիւն Եւ ապահովութիւն բերի: Հիգերոդ դարու մեր Մեսրոպը, Մեծ դիւանագէտ առաջնորդը, Դպրութեամբ փրկեց ազգը յաւէտ:

Նա սերով եկաւ որ ազգին ծառայի, Բիրեղ աղամանդի փայլեց լացնի, Ժամանակն անցնի դարերով, Նրա փայլն երբեք ու երբեք չխամրի:

Նա գրեցով եկաւ, անյադր զէնքով, Խաւար սրտեր լուսաւորեց, Սէրն ազգին ու եկեղեցուն խորացրեց, Գոյութեան հիմքերը ամրապնդեց:

Փառք մեծ սուրբն Մեսրոպ Մաշտոց, Դու մեծասանց լուսաւորիչ: Դու հայերից հայամահ Վարդապետ, Ինչպէս տասնվեց դար՝ Քո աղամանակն ու տառերը, Սերդից սերունդ, Մագաղաթից մագաղաթ, Մատենից մատեն, Սրտից սիրտ, Ծրթումբից շրթումբ, Դրոշմուել են սրբատառ՝ Որպէս աւանդ սրբազան, Դարձեալ ու դարձեալ, Երիցս անգամ նշմարիտ, Կապրե՛ն եւ կապրե՛ս անբաժան Ս.մէն մէկ հայի սրտում:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԲԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Շարունակում է 13-էն

լով, խորապէս տպաւորեց իր ունեւորները: Նոյնքան իմաստալից էր՝ հեռուստադիտողներին մեծ թէ փոքր նուէրներով թեյեթոնին օժանդակելու հրաւիրող իր կոչը:

Երբոր գիշերուան ժամը 12ին վարագոյրը իջաւ Հայ Ամերիկեան

որբերու Ս. Ծննդեան հիմնադրի 16րդ թեյեթոնին վրայ, հոգեկան գոհունակութիւն մը եւ յաղթանակի ժպիտ մը կը ցոլար բոլորի դէմքերուն վրայ՝ յանուն հայրենի մեր միևնուճար երեխաներուն միասնականութեամբ եւ ժողովուրդի լիաբուն մասնակցութեամբ նուաճուած այս յաղթանակին համար: Բոլորին վարձքը կատար:

JOP OPPORTUNITY

ConnectTo Security has an immediate opening for an alarm installer position. Training will be provided. Must speak English well. www.ConnectTo.com Please email resume to: jobs@ConnectTo.com; call 818-546-4602

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

Connect To Security ընկերութիւնը կարիքը ունի alarm տեղաւորող պաշտօնեայի մը: Մենք կը մարզենք թեկնածուն: Լաւ Անգլերէն գիտնալը պայման է: Հետաքրքրուողները կրնան ի-նամակ ուղարկել jobs@ConnectTo.com հասցէին եւ կամ հեռաձայնել 818-546-4602: www.ConnectTo.com:

ԱՐԹՈՒՐ ԱՐՐԱՀԱՍԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՈՒԲԱՒՈՐ ՔԱՂԱՔԱՅԻ



Պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամին շնորհակալ է Երեւանի պատուաւոր քաղաքացու կոչում:

Երեւանի քաղաքապետարանի յարակից տարածքում անցկացուող «էրէբունի-Երեւան» տոնակատարութեան պաշտօնական հանդիսութեան ժամանակ 35-ամեայ բռնցքամարտիկին կոչումը շնորհել է Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանը:

Յիշեցնենք, որ Արթուր Աբրահամը յաջորդ մենամարտն անցկանելու է Նոյեմբերի 21-ին Գերմանիայի Հանովեր քաղաքում, որտեղ հանդիպելու է անգլիացի Մարտին Մարէյին:

ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԶՏՈՒՄԻ 10-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԱՒԱՐՏԵՑ

Ե Լ Ր Ո Ա Յ Ի ախոյեանութեան գտումի մրցումներու 10-րդ եւ վերջին հանգրուանին, Հայաստան կատարեց իր վերջին մրցումը Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» Մարզադաշտ «ին վրայ Ալպանիոյ հաւաքականին դէմ, որ յաղթանակի պէտք ունէր աւարտական հանգրուան հասնելու համար: Հիւրերը կանուխէն ճնշեցին եւ 9-



րդ վայրկեանին ալպանական յարձակում մը գապելու ատեն կամօ Յովհաննիսեանը սխալմամբ նշանակեց Հայաստանի դարպասին մէջ: 23-րդ վայրկեանին «Ջիւրիխ»-ի Պերաթ Տլիմսիթին նշանակեց Ալպանիոյ երկրորդ կորը, Մեմուշալի փոխանցումէն օգտուելով եւ 76-րդ վայրկեանին «Ջիւրիխ»-ի Սատիքուն դարձաւ երրորդ կորին հեղինակը: Երկրորդ կիսախաղին Օզպիլիսը փոխարինեց Եուզպաշեանը, Սարգիսովը փոխարինեց Մովսիսեանը եւ Պօղոսեանը փոխարինեց Գէորգ Ղազարեանը, սակայն մրցումին արդիւնքը փոխել կարելի չէր: Հայաստան կրեց իր վեցերորդ պարտութիւնը 0-3 հաշիւով եւ երկու կէտով զրաւեց խմբակին վերջին դիրքը: 2006-էն ետք այս մէկը Հայաստանի ամենատկար արդիւնքն էր Եւրոպայի գտումի մրցումներուն:

Զորրորդ խմբակին մէջ Գերմանիան եւ Լեհաստանը գրաւեցին առաջին երկու դիրքերը եւ հասան աւարտական հանգրուան, իսկ Իրլանտան շահեցաւ փլէյ օֆի առիթ:

Վեցերորդ խմբակին մէջ Հիւսիսային Իրլանտան եւ Ռու մանիան ապահովեցին աւարտական հանգրուանի տոմսը, իսկ Հունգարիան գրաւեց փլէյ օֆի դիրքը:

Իններորդ խմբակին մէջ Ալպանիան առաջին անգամ ըլլալով հասաւ աւարտական հանգրուան, մինչ Դանիան փլէյ օֆի մրցում պիտի խաղայ ապահովելու համար իր տոմսը:

ԵՐՈ-2016. ՎԵՐՋԻՆ ՏՈՒՐԻՑ ԱՈԱԶ ԵԶՐԱՓՈԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԻ ՈՒՂԵԳԻՐ ԵՆ ՆՈՒԱԾԵԼ 11 ԽՈՒՄԲԵՐ

Ֆուտպոլի Եւրոպայի առաջնութեան ընտրական փուլի աւարտից մէկ տուր առաջ եզրափակիչ մրցաշարի ուղեգիր են նուաճել 11 հաւաքականներ:

Անգլիան, Չեխիան, Իսլանդիան ու Աւստրիան ուղեգիր ապահովել էին դեռ Սեպտեմբերին, իսկ Պորտուգալիան, Սպանիան, Շուէցարիան, Հիւսիսային Իրլանդիան, Ուէլսը, Իտալիան ու Պելզիան եզրափակիչ մրցաշարին մասնակցելու իրաւունքի արժանացան Հոկտեմբերին անցկացուող նախավերջին տուրի արդիւնքում:

Եւրօ-2016-ի վերջին տուրը կը մեկնարկի Հոկտեմբերի 11-ին:

Յիշեցնենք, որ պատմութեան մէջ առաջին անգամ Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ մրցաշարին մասնակցելու են 24 հաւաքականներ: Եւրօ-2016-ի կազմակերպիչ երկիրն է Ֆրանսան, որը եւս մասնակցում է ընտրական փուլին, սակայն հաշուարկից դուրս է:

ՅՈՋԵՖ ԲԼԱՏԵՐ. ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՂՆՉԱՅՆԵԼ ԻՆՁ, ԲԱՅՑ ՈՉ ԻՄ ԳՈՐԾԸ



ՖԻՖԱ-ի նախագահ Յոզէֆ Բլատերը յայտարարել է, որ չի պատրաստուում յանձնուել դժուարութիւնների պատճառով: Վերջերս 79-ամեայ շուէցարացին 90 օրով զրկուել էր իր լիազօրութիւններից:

«Իմ հետ ամէն բան կարգին է, հիանալի եմ զգում ինձ: Ես մարտիկ եմ: Նրանք կարող են ոչնչացնել ինձ, բայց իմ ամբողջ կեանքի գործը ոչնչացնել չի յաջողուի», - Բլատերի խօսքը մէջբերում է Schweiz am Sonntag-ը:

Յիշեցնենք, որ 90 օրով իրենց լիազօրութիւններից զրկուել են նաեւ ՖԻՖԱ-ի փոխնախագահ Միշէլ Պլատինին (ՌԻԵՖԱ-ի նախագահ) եւ կազմակերպութեան գլխաւոր քարտուղար ժերոմ Վալկէն: Վերջերս Շուէցարիայի իրաւապահ մարմինները քրէական գործ են յարուցել Բլատերի նկատմամբ՝ նրան կասկածելով ֆինանսական միջոցների իւրացման եւ յանցաւոր անփութութեան մէջ: 79-ամեայ շուէցարացուն կասկածում են նաեւ 2011թ. ֆետրուարին ՌԻԵՖԱ-ի նախագահ Միշէլ Պլատինիին 2 միլիոն շուէցարական ֆրանկ կաշառք տալու մէջ:

Յոզէֆ Բլատերը 1998-ից է ղեկավարում ՖԻՖԱ-ն, իսկ Մայիսի 29-ին նախագահի պաշտօնում ընտրուել էր 5-րդ անգամ: Դրանից 5 օր անց նա յայտնեց հեռանալու մասին, սակայն յետոյ որոշեց մնալ մինչեւ 2016-ի ֆետրուարի 26-ը կայանալիք նախագահական ընտրութիւնները:

ՌՈՆԱԼԴՈՒՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ «ՈՍԿԵ ԽԱՂԱԿՕՇԻԿԸ» ԿԸ ՍՏԱՆԱՅ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ

Մադրիդի «Ռէալի» 30-ամեայ յարձակուող կրիշտիանու Ռոնալդուն «Ոսկէ խաղաօշիկ» մրցանակը կը ստանայ Հոկտեմբերի 13-ին: Արարողութիւնը կը կայանայ Մադրիդում, յայտնում է Marca-ն:



Պորտուգալիայի հաւաքականի աւագը Ռեկորդային չորրորդ անգամ կ'արժանանայ այդ մրցանակին, որը շնորհուում է եւրոպական առաջնութիւնների լաւագոյն ումբարկուին: «Ոսկէ խաղաօշիկը» յանձնում են 1968-ից եւ դեռ ոչ ոք այն չի ստացել 4 անգամ:

Յիշեցնենք, որ Սպանիայի նախորդ առաջնութիւնում Ռոնալդուն մասնակցել էր 35 խաղի եւ դարձել էր 48 կորի հեղինակ: Պորտուգալացի յարձակուողը «Ոսկէ խաղաօշիկին» արժանացել է նաեւ 2008-ին, 2011-ին եւ 2014-ին:

GLOBE SOCCER AWARDS. ՏԱՐՈՒԱՅ ԼԱՒԱԳՈՅՆ ԱԿՈՒՄԲԻ ՀԱՒԱԿՆՈՐԴՆԵՐԸ

Ակումբների եւ-րոպական ասոցիացիայի Globe Soccer Awards մրցանակի թեկնածուների եզրափակիչ ցանկում ընդգրկուել են Չեմպիոնների լիգայի յաղթող «Բարսելոնան», եզրափակիչի մասնակից թուրինի «Յուուսենտուսը», Միլիանի «Բաւարիան», ֆրանսական ՊՍՅՆ եւ ուկրաինական «Դնեպրը», հաղորդում է TuttoSport-ը:



Անցած մրցաշրջանում «Դնեպրը» կարողացաւ հասնել Եւրոպայի լիգայի եզրափակիչ, թէեւ Ուկրաինայի ներքաղաքական լարուած իրավիճակի պատճառով տնային հանդիպումներն անցկացնում էր չէզոք խաղադաշտում:

Յաղթողին կ'որոշեն ֆուտպոլի յայտնի գործիչներ: Մրցանակաբաշխութիւնը տեղի կ'ունենայ Դեկտեմբերին Արաբական էմիրութիւններում: